World Vision Armenia

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

«ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՄԵԴԻԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՄԵԴԻԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ՄԵԴԻԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 3

II. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՆՑԱԿՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13

III. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 15

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 27

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 28

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ
1-30 հունիսի, 2015թ. 29

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ
1 հունիսի, 2015թ. 54

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՎ/ԿԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՈՎԱԶԴԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ
16-30 հունիսի, 2015թ. 71

«ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՄԵԴԻԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ՄԵԴԻԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Անչափահասների իրավունքների պահպանումը Հայաստանի հեռարձակվող ԶԼՄ-ներում» թեմայով մեդիա մոնիտորինգն իրականացվել է Երևանի մամուլի ակումբի կողմից՝ «World Vision International» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ, և ընդգրկել է 2015թ. հունիսի 1-30 ընկած ժամանակահատվածը:

Մոնիտորինիգի նպատակն է եղել՝քանակական տվյալների որակական վերլուծությամբ պարզել, թե անչափահասների (երեխաներ և մինչև 18 տարեկան պատանիներ/աղջիկներ) մասնակցությամբ կամ նրանց նվիրված հրապարակումներ պատրաստելիս և տարածելիս ինչ չափով են պահպանվում բնակչության այդ խմբի իրավունքները հայաստանյան հեռուստաալիքներում:

Մոնիտորինգի ընթացքում ստացված տվյալները հաշվի են առնվելու զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրության և նորմատիվային այլ ակտերի փոփոխության և լրամշակման համար առաջարկությունների մշակման, ինչպես նաև՝ խմբագիրների և լրագրողների համար ԶԼՄ-ներում երեխաների իրավունքների պահպանության թեմայով ուսումնական մոդուլների ձևավորման ժամանակ:

Սույն հետազոտության հրատապությունը պայմանավորված է եղել երեխայի խոսքի ազատության և ազատ արտահայտման, անձեռնմխելիության, ԶԼՄ-ների մատչելիության, ինչպես նաև՝ նոր մեդիա արտադրանքի և նոր տեխնոլոգիաների մշակման ժամանակ վնասակար բովանդակությունից պաշտպանության իրավունքները հաշվի առնելու և պաշտպանելու անհրաժեշտությամբ:

ԵՄԱ հետազոտությունն անցկացվել է հատուկ մշակված մեթոդաբանությամբ (*տես՝ ներքևում*), որի հիմքում ընկած են երեխաների իրավունքների պահպանությունը կարգավորող միջազգային նորմերը և ՀՀ օրենսդրությունը, ինչպես նաև՝ երեխաների և մանկության խնդիրների լուսաբանման համընդհանուր էթիկական սկզբունքները: Մեթոդաբանության (հետազոտության չափորոշիչների) մշակման ժամանակ հետազոտվել և հաշվի են առնվել՝

- երեխաների և հարակից իրավունքները կարգավորող միջազգային այն համաձայնագրերն ու պայմանագրերը, որոնց միացել է Հայաստանը,

- երեխաների ու մանկության խնդիրների լուսաբանման՝ միջազգային կազմակերպությունների հանձանարարականները և էթիկական սկզբունքները/պրակտիկ ուղեցույցները,

- երեխաների իրավունքների պահպանությունը կարգավորող ՀՀ օրենսդրությունը,

- երեխաների և մանկության խնդիրների լուսաբանման ազգային փորձը և նախաձեռնությունները:

Մասնավորապես, հետազոտության չափորոշիչների հիմքում ընկած են «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որպես իրավաբանորեն պարտադիր առաջին միջազգային փաստաթուղթը, որը ներառում է մարդու իրավունքների ողջ սպեկտրը, ինչպես նաև՝ «Երեխաների մասին նյութեր պատրաստելու լրագրողական էթիկա» ուղեցույցը, որը մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի մեդիա խմբի կողմից, որպես պրակտիկ գործիքակազմ, և կցված է «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային»:

Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին

Հայաստանը Կոնվենցիան ստորագրել է 1992թ.: Ուժի մեջ մտնելու պահից (1990թ. սեպտեմբերի 2) և հետագա 25 տարիների ընթացքում Կոնվենցիան մնում է երեխաների իրավունքների պաշտպանության և պահպանության առավել սպառիչ և ճանաչված փաստաթուղթը: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան բաղկացած է 54 հոդվածից, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է մի առանձին իրավունքի: Այդ իրավունքները բաժանվում են չորս խմբի՝ գոյատևում, պաշտպանություն, զարգացում և մասնակցություն: Կոնվենցիայի 12, 13, 16 և 17 հոդվածները սահմանում են երեխայի խոսքի ազատության և ազատ արտահայտման իրավունքը, անձեռնմխելիության իրավունքը և ԶԼՄ-ների դերը այդ իրավունքի իրականացման գործում: Այդ հոդվածներում հստակ սահմանված են երեխայի այն իրավունքները, որոնք կարող են խախտվել զանգվածային լրատվամիջոցների անպատասխանատու վարքի պատճառով:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 12 *(ոչ պաշտոնական թարգմանություն)*

1. Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

2. Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ, ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով, ունկնդրվել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 13

1. Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ երեխայի ընտրությամբ:

2. Այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, սակայն դրանք կարող են միայն նախատեսված լինել օրենքով և անհրաժեշտ՝ հետևյալ նպատակներով.

(ա) այլ անձանց իրավունքները և հեղինակությունը հարգելու, կամ

(բ) պետական անվտանգությունը կամ հասարակական կարգը (ordre public), կամ բնակչության առողջությունը, կամ բարոյականությունը պաշտպանելու համար:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 16

1. Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության կամայական կամ ապօրինի միջամտության, կամ իր պատվի և հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության:

2. Երեխան նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի կողմից պաշտպանության իրավունք ունի:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 17

Մասնակից պետություններն ընդունում են զանգվածային լրատվության միջոցների կարևոր դերը և երեխայի համար ապահովում են ներպետական և միջազգային զանազան աղբյուրների տեղեկատվության ու նյութերի մատչելիությունը, հատկապես՝ այնպիսի տեղեկատվության ու նյութերի, որոնք միտված են երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանը, ինչպես նաև նրա ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելուն: Այդ նպատակով մասնակից պետությունները.

(ա) խրախուսում են զանգվածային լրատվության միջոցների կողմից այնպիսի տեղեկատվության ու նյութերի տարածումը, որոնք սոցիալական ու մշակութային առումով օգտակար են երեխային և համապատասխանում են 29-րդ հոդվածի ոգուն,

(բ) խրախուսում են միջազգային համագործակցությունը զանազան մշակութային, ներպետական և միջազգային աղբյուրներից այդպիսի տեղեկատվության ու նյութերի նախապատրաստման, փոխանակման ու տարածման գործում,

(գ) խրախուսում են մանկական գրականության լույսընծայումն ու տարածումը,

(դ) խրախուսում են զանգվածային լրատվության միջոցներին՝ հատուկ ուշադրություն դարձնելու՝ ազգային փոքրամասնություններին կամ բնիկ ազգաբնակչության այս կամ այն խմբին պատկանող երեխաների լեզվական պահանջմունքներին,

(ե) հաշվի առնելով 13 և 18-րդ հոդվածների դրույթները՝ խրախուսում են երեխայի բարեկեցությանը վնասող տեղեկատվությունից և նյութերից երեխային պաշտպանելու համապատասխան ուղենիշների զարգացումը:

«Երեխաների մասին նյութեր պատրաստելու լրագրողական էթիկա» ուղեցույց

ԶԼՄ-ների համար գրված ուղեցույցը, որը հիմնված է լրագրողների պրակտիկ փորձի վրա, ուղղված է աջակցելու լրատվամիջոցներում երեխաներին պատասխանատու կերպով ներկայացնելուն, այն բանին, թե ինչպես լավագույնս պահպանել երեխաների իրավունքները և օգնել նրանց որոշակի դերակատարություն ունենալ ԶԼՄ-ներում:

Ընդհանուր սկզբունքներ

1. Յուրաքանչյուր կոնկրետ երեխայի իրավունքներն ու շահերը պետք է պահպանվեն ցանկացած պարագայում: Դրանք ավելի բարձր են դասվում, քան մնացած բոլոր դատողությունները, այդ թվում մանկության և ընդհանուր առմամբ երեխաների իրավունքների հետ կապված հարցերը:

2. Հասուն մարդու նման՝ երեխան նույնպես ունի անձնական կյանքի խորհրդապահության՝ գաղտնիության իրավունք: Հարկավոր է երեխային պաշտպանել հնարավոր ցանկացած տհաճությունից և պատժից:

3. Երեխան ունի արտահայտվելու և իր կարծիքը լսելի դարձնելու, ինչպես նաև իր կյանքին վերաբերող որոշումների կայացմանը մասնակից լինելու իրավունք: Այս իրավունքի իրացումը կախված է երեխայի տարիքից և հասունության աստիճանից:

4. Լրագրողական նյութի հրապարակման հետևանքները գնահատելիս երեխային օգնություն են ցուցաբերում նրա ամենամտերիմ մարդիկ՝ ծնողները, խնամակալները, ինչպես նաև երեխայի հետ աշխատող մասնագետները՝ բժիշկները, հոգեբանները, սոցիալական մանկավարժները և այլոք:

5. Եթե երեխայի, նրա եղբայրների, քույրերի կամ հասակակիցների համար առկա է հնարավոր վտանգ, նրանց անունները պարզապես չհրապարակելը կամ փոխելը բավարար չէ: Չի կարելի նաև հրապարակել լուսանկարներ կամ այլ փաստական նյութեր, որոնցով հնարավոր լինի երեխային նույնականացնել՝ ճանաչել:

Երեխաների հետ հարցազրույց վարելու սկզբունքներ

1. Հարցազրույցի համար երեխաներին ընտրելիս խուսափեք սեռային, ռասայական, կրոնական, սոցիալական կարգավիճակի, կրթության մակարդակի և ֆիզիկական առանձնահատկություններով պայմանավորված խտրականությունից:

2. Երեխայից հարցազրույց վերցնելուց, տեսանկարահանելուց, իր լուսանկարը կամ իրեն վերաբերող փաստական նյութեր հրապարակելուց առաջ՝ երեխայից կամ նրա համար պատասխանատու անձից (ծնող, խնամակալ, մանկատան տնօրեն, խնամակալության և խնամատարության մարմնի ներկայացուցիչ) ստացեք թույլտվություն, ցանկալի է՝ գրավոր և անպայման երեխային հասկանալի լեզվով: Համաձայնությունը պետք լինի կամավոր, և բացառվի պարտադրանքի որևէ ձև: Երեխան կարող է հարցազրույց տալուց առաջ խորհրդակցել իր համար վստահելի մեծերի հետ:

3. Երեխան և նրա համար պատասխանատու անձը (ծնող, խնամակալ, մանկատան տնօրեն, խնամակալության և խնամատարության մարմնի ներկայացուցիչ) պետք է պարզորոշ հասկական, որ իրենք խոսում են լրագրողի հետ, ով մտադիր է տվյալ նյութը տարածել տեղական կամ հանրային միջավայրում: Լրագրողը պարտավոր է երեխային և նրա համար պատասխանատու անձին բացատրել հարցազրույցի նպատակը և այն, թե ինչպես է պատրաստվում դա օգտագործել:

4. Հարցազրույցի ընթացքում երեխային հոգեկան ցավ մի՛ պատճառեք, մի՛ ստիպեք նրան՝ կրկին վերապրել իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները և իր կյանքի այլ ծանր պահերը: Խուսափեք երեխայի և նրա ընտանիքի անդամների ազգությանը, մշակույթին, կրոնին վերաբերող՝ իրենց համար նվաստացուցիչ արտահայտություններից կամ մեկնաբանություններից:

5. Զգտեք այնպես անել, որ հարցազրույց տալիս երեխան իրեն հարմարավետ զգա և խոսի հանգիստ, առանց կողմնակի ճնշման՝ այդ թվում լրագրողի կողմից: Սահմանափակեք հարցազրույցին ներկա անձանց թիվը: Կինո, հեռուստա և ռադիոհարցազրույցներ վերցնելիս առանձնապես ուշադիր եղեք տեսաձայնային միջավայրի հանդեպ, որպեսզի խուսափեք երեխայի գտնվելու վայրը բացահայտելու, նույնականացնելու վտանգից կամ նրա ընտանիքը, համայնքը, հարազատ վայրերը ցույց տալուց նրան տառապանք պատճառելուց: Անհրաժեշտ է նաև, որպեսզի տեսաձայնային միջավայրի ընտրությունը համապատասխանի երեխայի, նրա կյանքի և դեպքի մասին պատմությանը:

6. Խուսափեք բեմադրություններից: Երեխաներին մանիպուլյացիաների մի՛ ենթարկեք: Երեխաներին մի՛ խնդրեք ասել կամ անել այն, ինչը նրա սեփական պատմության մասը չի կազմում, սակայն ձեզ հարկավոր է տպավորիչ պատկեր ստանալու կամ ազդեցիկ ռեպորտաժ պատրաստելու համար:

Երեխաների մասին ռեպորտաժներ պատրաստելու սկզբունքներ

1. Լրագրողական պատրաստի նյութը, ձեր ընդհանրացումները և նկարագրությունները չպետք է խոցեն երեխայի հոգին և բացասաբար ազդեն նրա հոգեկան աշխարհի վրա, դառնան նրա շահագործման և հասարակության կողմից ծաղրվելու, չընդունվելու պատճառ: Չարժե ավելի ծանրացնել երեխայի վիճակը, խուսափեք դաժան կամ վիրավորական նկարագրություններից, որոնք կարող են երեխայի մոտ առաջացնել բացասական ապրումներ, այդ թվում՝ լրացուցիչ ֆիզիկական և հոգեբանական վնաս:

2. Հավաստի տեղեկություն տվեք երեխայի հետ ձեր ծանոթության և հարցազրույց վերցնելու հանգամանքների մասին: Միշտ տվեք պատմության կամ երեխային ներկայացնելու հստակ համատեքստը:

3. Միշտ փոխեք երեխայի անունը և մի հրապարակեք երեխային նույնականացնող, ճանաչելի դարձնող նյութեր.

- եթե նա սեռական բռնության կամ շահագործման զոհ է կամ ինքն է ֆիզիկական կամ սեռական բռնություն կիրառել,

- եթե ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր է, սպիդով հիվանդ է կամ այդ հիվանդությունից է մահացել (բացի այն դեպքերից, երբ երեխան, ծնողները և խնամակալը համաձայնում են, որ անունը հրապարակվի),

- եթե մեղադրվում է կամ դատապարտվել է հանցագործություն կատարելու համար:

Հնարավոր վտանգի դեպքում փոխե՛ք անունը և մի՛ հրապարակեք երեխային նույնականացնելու հնարավորություն տվող նյութեր,

- եթե երեխան ներկայում կամ նախկինում մասնակցել է ռազմական գործողությունների,

- եթե երեխան ապաստան է խնդրում, փախստական է կամ վերաբնակիչ:

4. Որոշ դեպքերում երեխայի անունը և/կամ լուսանկարը հրապարակելը թույլատրելի և նույնիսկ անհրաժեշտ է.

- եթե լրագրողի հետ հանդիպումը եղել է հենց երեխայի նախաձեռնությամբ, որն ուզում է իր ասելիքը, իր տեսակետը հաղորդել լսարանին,

- երբ երեխան մասնակցում է սոցիալական այս կամ այն ծրագրին, և ինքն է ուզում ներկայանալ որպես այդ ծրագրի մասնակից,

- երբ երեխան մասնակցում է հոգեբանական և սոցիալական վերականգնողական մի ծրագրի, որտեղ երեխաների անունների հրապարակումն այդ ծրագրի բաղկացուցիչ մասն է և օգտակար է երեխայի զարգացման համար:

Սակայն երեխայի ինքնությունը բացահայտելիս անհրաժեշտ է ապահովել նրա անվտանգությունը և ցուցաբերել օգնություն՝ խարանի կամ ճնշումների դեպքում:

5. Երեխայի հետ խոսելիս հաշվի առեք նրա հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները: Երեխայից ստացված տեղեկությունների հավաստիությունը ճշտեք այլ երեխաների և նրա մտերիմ մեծահասակների միջոցով:

6. Երեխայի մասին տեղեկությունը հանրայնացնելու հետևանքով նրա համար որևէ հնարավոր վտանգի հետ կապված կասկածի ծագման դեպքում, հրապարակման մեջ

ներկայացրեք ոչ թե կոնկրետ այդ երեխային, այլ ընդհանուր առմամբ այդ կարգավիճակում գտնվող երեխաների վիճակը, որքան էլ որ նրա պատմությունը նշանակալի և արդիական թվա ձեզ:

Մեդիա մոնիտորինգի չափորոշիչների մշակման ժամանակ հաշվի են առնվել նաև ինչպես ազգային օրենսդրության դրույթները (մասնավորապես, «Երեխայի իրավունքների մասին», «Հեռուսատեսության և ռադիոյի մասին» և «Գովազդի մասին» ՀՀ օրենքները), այնպես էլ՝ երեխաների և մանկության հիմնախնդիրների լուսաբանման էթիկական սկզբունքները (մասնավորապես, Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը):

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը

Սույն օրենքում առկա են խոսքի ազատության իրավունքին այս կամ այն չափով առնչվող դրույթներ:

Հոդված 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի , խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները , համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Դավանանքի, ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

Հոդված 19. Երեխայի աշխատանքի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, առողջական վիճակին և ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել նրա 16 տարին, բացառիկ դեպքերում՝ 15 տարին լրանալուց հետո:

Երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Արգելվում է երեխայի կողմից ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքը, դրանց արտադրության և օգտագործման մեջ երեխայի ներգրավումը, ինչպես նաև այնպիսի

աշխատանքի կատարումը, որը կարող է վնասել նրա առողջությանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթություն ստանալուն:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի մի քանի դրույթներ նույնպես առնչվում են երեխաների իրավունքներին.

Հոդված 24. Հեռուստառադիոհաղորդումների չարաշահման անթույլատրելիությունը

Արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել՝

ա) իշխանությունը բռնի զավթելու, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու և տապալելու քարոզչության.

բ) ազգային, ռասայական և կրոնական թշնամանք կամ երկպառակություններ սերմանելու.

գ) օրենքով պահպանվող պետական կամ այլ գաղտնիքներ հրապարակելու.

դ) պատերազմ քարոզելու.

ե) քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված գործողությունների կոչեր տարածելու.

զ) պոռնկագրություն տարածելու.

է) բռնության և դաժանության պաշտամունք, մարդկային արժանապատվությունը նսեմացնող և անչափահասների դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող հաղորդումներ հեռարձակելու.

ը) զրպարտության, այլ անձանց իրավունքները, անմեղության կանխավարկածը խախտելու նպատակներով:

Բացառություն կարող են կազմել պատմափաստավավերագրական նյութերի օգտագործումը և ցուցադրումը:

Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ֆիլմերը կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ը: Բացառություն կարող են լինել կոդավորված հեռուստառադիոհաղորդումները:

«Գովազդի մասին» ՀՀ օրենք

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, որոնք արգելում անչափահասներին ներգրավել գովազդային գործունեության մեջ:

Հոդված 14. Անչափահասների պաշտպանությունը գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման ժամանակ

1. Արգելվում է այն գովազդը, որտեղ՝

ա/ օգտագործվում են անչափահասների դյուրահավատությունն ու անփորձությունը.

բ/ պարունակվում են տեսաձայնային այնպիսի դրվագներ, որոնք կարող են բարոյական կամ ֆիզիկական վնաս պատճառել անչափահասներին.

գ/ խաթարվում են ծնողների և դաստիարակների հեղինակությունը, անչափահասների վստահությունը նրանց նկատմամբ:

2. Արգելվում է ալկոհոլային խմիչքների և ծխախոտի գովազդի տեղակայումը մանկապատանեկան ռադիոհեռուստահաղորդումներում, անչափահասներին վերաբերող տպագիր հրատարակություններում, ինչպես նաև մանկական, ուսումնական, բուժական, մշակութային, մարզական կազմակերպություններում, հաստատություններում և դրանց տարածքում:

3. Արգելվում է անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը գովազդում, եթե այն չի վերաբերում անչափահասների համար նախատեսված ապրանքներին:

Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը

Կանոնագիրը 2015թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի 39 լրատվամիջոց և լրագրողական 8 միություն միավորող նախաձեռնության և նրա շրջանակներում ձևավորված ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հիմնարար փաստաթուղթն է: Այն պարունակում է դրույթներ, որոնք անմիջականորեն առնչվում են ԶԼՄ-ներում երեխաների իրավունքների պահպանությանը.

4.3. առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Զգույշ լինել դեռահաս մեղադրյալների, ամբաստանյալների, դատապարտյալների, սեռական հանցագործությունների զոհերի ինքնությունը բացահայտելիս,

4.4. երեխաներին վերաբերող կամ նրանց մասնակցությամբ նյութեր պատրաստելիս առաջնորդվել ՅՈՒՆԻՍԵՖ-ի մեդիախմբի մշակած՝ «Երեխաների մասին նյութեր պատրաստելու լրագրողական էթիկան» փաստաթղթով,

4.5. երեխաներից հարցազրույց վերցնելուց, տեսանկարահանելուց, լուսանկարը կամ նրան վերաբերող փաստական նյութեր հրապարակելուց առաջ՝ ստանալ երեխայի և նրա համար պատասխանատու անձի համաձայնությունը, ցանկալի է՝ գրավոր և անպայման երեխային հասկանալի լեզվով: Համաձայնությունը պետք լինի կամավոր, և բացառվի պարտադրանքի որևէ ձև: Երեխան և նրա համար պատասխանատու անձը պետք է պարզորոշ հասկանան, որ իրենք խոսում են լրագրողի հետ, ով մտադիր է տվյալ

նյութը տարածել լրատվամիջոցով: Զգտել, որ հարցազրույցի ընթացքում երեխային հոգեկան ցավ չպատճառվի, չստիպել նրան՝ կրկին վերապրել իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները և իր կյանքի այլ ծանր պահերը, ասել կամ անել բաներ, որոնք հարկավոր են միայն տպավորիչ պատկեր ստանալու կամ ազդեցիկ ռեպորտաժ պատրաստելու համար:

II. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՆՑԱԿՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մոնիտորինգն ընդգրկել է Հայաստանի 5 հեռարձակվող ԶԼՄ՝

- 4 համազգային հեռուստաալիք՝ **Հայաստանի հանրային հեռուսատեության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա» և «Կենտրոն»**,
- 1 մայրաքաղաքային հեռուստաալիք՝ **«ATV»**:

Հետազոտվել են վերը նշված ալիքներով հեռարձակվող այն բանավիճային հաղորդումները, որոնք ի թիվս այլ հարցերի, արծարծում են նաև երեխաներին վերաբերող խնդիրներ (թոք շոու ձևաչափ), մանկական ուղղվածության հաղորդումները որոնք հեռարձակվել են ***2015թ. հունիսի 1-30-ը***:

Հայաստանի հանրային հեռուստատեության Առաջին ալիք (հ1)
«Բարդ երկուշաբթի»
«Ազատ գոտի»
«Հայ ասպետ»
«Արմենիա»
«Մարդկային գործոն»
«Սուր անկյուն»
«Հայի աչքեր»
«Երկիր Մեդիա»
«Մանկական երկիր»
«Ազատ քաղաքացի»
«Զարթոնքի սերունդ»
«Կենտրոն»
«Ես կամ»
«ATV»
«Կիսաբաց լուսամուտներ»

Հետազոտության են ենթարկվել նաև մոնիտորինգի առարկա հեռուստաալիքների գովազդային բլոկները, որոնք հեռարձակվել են **2015թ. հունիսի 16-30-ը** երեկոյան եթերում (ժամը 18.00-ից 24.00):

Բացի դրանից, առանձին հետազոտության առարկա է դարձել **2015թ. հունիսի 1-ի՝** Երեխաների պաշտպանության համաշխարհային օրվա հեռուստաեթերը (երբ, ենթադրվում է, որ երեխաների թեմատիկան ԶԼՄ-ներում ակտիվ լուսաբանման է արժանանում): Հետազոտվել են համազգային երեք՝ Հ1, «Երկիր Մեդիա» և «Կենտրոն» հեռուստաալիքներով երեկոյան (18.00-24.00) հեռարձակված բոլոր հաղորդումները (գովազդից բացի):

Երեխաների իրավունքների պահպանման մոնիտորինգի չափորոշիչները հեռուստահաղորդումներում

Հեռուստահաղորդումների մոնիտորինգի համար մշակվել են չափորոշիչներ, որոնցով հետազոտվող ԶԼՄ-ների նյութերում արձանագրվել են երեխաների իրավունքների խախտումները: Այդ չափորոշիչներն, իրենց հերթին, դասակարգվել են հինգ պայմանական թեմատիկ խմբերով, որոնցից յուրաքանչյուրն, իր հերթին պարունակում է ենթախմբեր (ընդամենը՝42), որոնք սահմանում են հետևյալ չափորոշիչները.

I. Խոսքի և արտահայտման ազատության իրավունք, իր՝ երեխայի կյանքին վերաբերող որոշումների կայացման իրավունք (9 ենթախումբ)

II. Մասնավոր կյանքի, խորհրդապահության և անանունության իրավունք (7 ենթախումբ)

III. Երեխաների մասնակցությամբ հարցազրույցների/հաղորդումների վարման կանոններ (11 ենթախումբ)

IV. Երեխաների թեմատիկայի լուսաբանման կարծրատիպեր (9 ենթախումբ)

V. Նյութի մատուցման ձևը (6 ենթախումբ):

Երեխաների իրավուքների պահպանման մոնիտորինգի չափորոշիչները գովազդային նյութերում

Գովազդային բլոկների հետազոտության համար անվանակարգերի ընտրության հիմքում ընկած են այն սահմանափակումները, որոնք նախատեսված են երեխաների մասնակցությամբ և/կամ երեխաներին հասցեագրված գովազդի մասին ՀՀ օրենսդրությամբ: Տվյալ չափորոշիչները սահմանվել են 6 խմբերով.

1. Անչափահասների համար չնախատեսված ապրանքների գովազդում երեխաների մասնակցության արգելք

2. Ալկոհոլային խմիչքների, ծխախոտի և մոլախաղերի, ինչպես նաև այնպիսի ապրանք/ծառայությունների գովազդներում երեխաների մասնակցության արգելք, որոնք կարող են երեխային բարոյական կամ ֆիզիկական վնաս պատճառել, խանգարել նրա կրթական զարգացմանը

3. Երեխաների համար նախատեսված գովազդում այնպիսի աուդիո-, տեսաշարերի օգտագործման արգելք, որոնք կարող են երեխային բարոյական կամ ֆիզիկական վնաս պատճառել

4. Երեխաների համար նախատեսված հաղորդումները ալկոհոլի և ծխախոտի գովազդով ընդհատելու արգելք

5. Երեխաների դյուրահավատությունը և անփորձությունը խաղարկող գովազդի արգելք

6. Գովազդում ծնողների, դաստիարակների, նրանց հեղինակության նկատմամբ երեխաների վստահությունը խաթարող հնարքների օգտագործման արգելք:

III. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

2015թ. հունիսի 1-30

2015թ. հունիսի 1-30-ն ժամանակահատվածում ուսումնասիրվել է հետազոտության առարկա դարձած հինգ հեռուստաալիքների հաղորդումներում հեռարձակված 101 նյութ: Այդպիսի 11 նյութ (կամ հետազոտված նյութերի ընդհանուր քանակի 10.9 %-ը) պարունակել են երեխաների իրավունքների պահպանության չափորոշիչների 46 խախտում:

Այդ խախտումները այս կամ այն հաճախականությամբ բաշխված են թեմատիկ բոլոր հինգ խմբերով: Դրանց կեսը՝ 23-ը (կամ խախտումների ընդհանուր թվի 50%-ը) բաժին են ընկնում «Երեխաների մասնակցությամբ հարցազրույցների/հաղորդումների վարման կանոններ» խմբին: 9 խախտում (կամ 19.6%-ը) արձանագրվել է «Նյութի մատուցման ձև» խմբում, 6-ը (կամ 13%-ը)՝ «Մասնավոր կյանքի, խորհրդապահության և անանունության իրավունք» խմբում, 5-ը (կամ 10.9%-ը)՝ «Երեխաների թեմատիկայի լուսաբանման կարծրատիպեր» և 3-ը (կամ 6.5%-ը)՝ «Խոսքի և արտահայտման ազատության իրավունք, իր՝ երեխայի կյանքին վերաբերող որոշումների կայացման իրավունք» խմբում:

Վերոհիշյալ խախտումների ճնշող մեծամասնությունը թույլ է տրվել սոցիալապես անապահով ընտանիքներին և այն բարեգործական օգնությանը նվիրված հաղորդումներում կամ սյուժեներում, որը նրանց ցուցաբերվում է զանազան կազմակերպությունների և անձանց կողմից՝ հեռուստաալիքով նրանց պատմությունները ներկայացնելուց հետո:

Պատմելով իրենց հերոսների ծանր կյանքի մասին, նյութերի հեղինակները դրանք գերհագեցնում են անելանելիությամբ, հուսահատությամբ, այդ ընտանիքին/երեխաներին պատուհասած դժբախտությունների բեմադրված տեսարաններով: Բանավոր և տեսողական հնարքների նման առատությունը նպատակաուղղված է այն բանին, որ լսարանի մոտ բարձրացնի կարեկցելու աստիճանը, այդպիսով նրան խթանելով՝ օգնություն ցուցաբերել նյութի հերոսներին: Այդ ընթացքում հաշվի չեն առնվում երեխայի զգացմունքները, որին փաստորեն ստիպում են նորից ապրել իրեն բաժին հասած դժբախտությունները:

Նյութի մատուցման նմանօրինակ պրակտիկան միանգամից երկու սկզբունքի խախտում է՝

- Նյութում խուսափել այնպիսի լուսանկարների, տեսաշարերի և գրաֆիկական այլ միջոցների չափից ավելի օգտագործումից, որտեղ երեխաները ներկայացված են նվաստացուցիչ պայմաններում և միայն խղճահարություն առաջացնող իրավիճակներում, որոնցում անտեսված է երեխաների՝ սեփական

արժանապատվության զգացումը, և բացակայում է հարգանքը նրանց նկատմամբ *(հետազոտված 4 նյութում)*,

- Նյութում այնպիսի տեսաձայնային միջավայրի առկայության անթույլատրելիությունը, որը երեխայի ընտանիքը, համայնքը, հարազատ վայրերը ցույց տալիս նրան տառապանք է պատճառում *(4 նյութում):*

Դրանից բացի, մարդկանց ծանր սոցիալական դրությանը և նրանց ցուցաբերվող բարեգործությանը նվիրված նյութերում խախտվել են **երեխաների մասնակցությամբ հարցազրույցների/հաղորդումների վարման կանոնները**, մասնավորապես.

- Խուսափել երեխաների մեջ կեղծ հույսեր արթնացնելուց՝ հարցազրույցին/հաղորդմանը մասնակցելը խթանելու համար: Անթույլատրելիությունը՝ բեմադրություններ անելու, երեխաներին մանիպուլյացիաների ենթարկելու, նրանց խնդրելու՝ ասել կամ անել այն, ինչը երեխաների սեփական պատմության մաս չի կազմում, սակայն անհրաժեշտ է տպավորիչ պատկեր ստանալու կամ ազդեցիկ ռեպորտաժ պատրաստելու համար: Անընդունելիությունը՝ սենսացիոն լուսաբանման օգտին չարաշահելու երեխայի շահերը *(հետազոտված 9 նյութում)*,

- Խուսափել երեխային հոգեկան ցավ պատճառելուց, նրան ստիպելուց՝ կրկին վերապրելու իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները և իր կյանքի այլ ծանր պահերը *(8 նյութում)*,

- Խուսափել օգտագործելուց անհարկի և այնպիսի հարցեր, որոնք կարող են ցավ/վախ պատճառել, այնպիսի հարցեր, որոնց երեխաները չեն կարող պատասխանել, կամ կարճ աբստրակտ հարցեր (օրինակ, «այնպես չէ՞», «հասկանալի՞ է»), որոնք պահանջում են անբովանդակ, միավանկ պատասխաններ («այո», «ոչ») *(4 նյութում)*,

- Անթույլատրելիությունը՝ շարունակելու թեման կամ հարցազրույցը, եթե երեխան հուզված է, անհարմարություն է զգում, դառնում է ցրված, նվաղկոտ կամ գերզգայուն և այլն *(1 նյութում),*

- Խուսափել՝ օգտագործելուց երեխայից ստացված չստուգված տեղեկությունը, որպեսզի բացառվեն նրա կողմից չափազանցելը, ասեկոսեները որպես փաստ ներկայացնելը՝ լրագրողին դուր գալու կամ շողոքորթելու համար *(1 նյութում)*:

Հաճախ նմանատիպ նյութերում առկա էր **երեխաների հիմնախնդիրների կարծրատիպային լուսաբանումը**. անչափահաս հերոսները ներկայացվում էին որպես «զոհ-երեխաներ» *(հետազոտված 5 նյութում):*

Այսպես, «Արմենիա» հեռուստաալիքի «Սուր անկյուն» լրատվական-վերլուծական կիրակնօրյա հաղորդումն ունի «Խեղված ճակատագրեր» խորագիրը: Այդ խորագրի մեկ հաղորդման ժամանակ ներկայացվում է սոցիալապես անապահով որևէ ընտանիք, իսկ հաջորդ թողարկմանը ցույց են տալիս, թե նրանց ինչ օգնություն է տրվել: 2015թ. հունիսի 14-ի տվյալ խորագրի նյութը՝ վերնագրված «Կնճիռներ մատաղ հոգիներում», պատմում էր առանց հոր մեծացող երեխաների մասին: Երեխաները ներկայացվում էին որպես

հանգամանքների զոհ, որոնց կյանքում ոչ մի դրական բան չկա, միայն՝ հանգուցյալ հոր կարոտն է և վստահությունը, որ իրենց ծանր կյանքի պատճառն անհայրությունն է:

«Հայր ունենալու երջանկություն չեն վայելել (...) Վերժինե և Դիանա Գրիգորյան երկվորյակ քույրերը: (...) Ցավը նրանց ավելի է խոցում, անհայր մանկությունը բարդույթներ է առաջացրել, իսկ հոր կարոտը տխուր հետք թողել աղջիկների մատաղ հոգիներում: Նրան հիշում են լուսանկարով և այդ հիշողությամբ էլ պատկերում: (...) 7 ամյա Վերժինեն և Դիանան հասկանում են, որ եթե հայրն իրենց կողքին լիներ, ոչ հոգեկան ու ֆիզիկական ցավ կունենային, ոչ կարոտ, ոչ ընկճվածություն և ոչ էլ՝ հացի խնդիր: Աղջիկները համոզված են, որ նա երկնքում է, և սպասում են վերադարձին: (...) Որքան էլ փորձում էինք չհուզվել, չէր ստացվում, հատկապես երբ տեսանք հոր ու պապի լուսանկարի առջև կանգնած այս փոքրիկների կարոտած աչքերը»:

Նյութի հեղինակի այս խոսքերն ուղեկցվում են հետևյալ բեմադրված կադրերով. երեք երեխա կանգնած նայում են հանգուցյալ հոր և պապի լուսանկարներին՝ կախված դիմացի պատին:

Այնուհետև նյութի հեղինակը փոքրիկ աղջկան անտեղի հարց է տալիս՝ «Իսկ գերեզմանոց գնալուց դու չե՞ս վախենում»: Ինչին ստանում է հետևյալ պատասխանը. «Չեմ վախենում, որովհետև պապաս էնտեղ ա»:

«Սուր անկյուն» հաղորդման նույն խորագրի 2015թ. հունիսի 28-ի «Երբ հոգսը թակում է դուռը» վերնագրված նյութի հերոսը մի 10 տարեկան տղա էր: «Երկու տարի առաջ է զրկվել ազատամարտիկ հորից, միաժամանակ էլ՝ մանկությունից: Հիմա տան տղամարդն է, կերակրողը և կերակրում է՝ ինչպես կարողանում է՝ ծաղիկ վաճառելով կամ շիշ հանձնելով: Մինչև հիմա չի գտնվել մի բարի մարդ, որ օգներ ընտանիքին, տղային էլ ուղղորդեր դեպի գիր ու գրականություն, դեպի լույս: Եթե այդպես շարունակվի, ընտանեկան հոգսի խավարը բույն կդնի նաև նրա անմեղ հոգում»: Նյութի հեղինակի այն պնդումը, որ այս ընտանիքի կողքին ոչ մի բարի մարդ չկա, որը նրան կօգներ, տղային կուղղորդեր դեպի կրթություն և լույս, ոչ միայն փքուն և ճոռոմ է հնչում, այլ նաև՝ ամենայն հավանականությամբ, նպատակ ունի ուժեղացնել այն օգնության էֆեկտը, որն այս մարդկանց ցուցաբերվելու է, և որը մանրամասն ցուցադրվելու է հաջորդ հաղորդման ժամանակ:

Խոշոր պլանով ցուցադրելով տղայի անչափահաս քրոջ թաց աչքերը, որը լաց լինելով ասում է. «Ցավալի ա, որ փոքր ախպերդ ա գնում փող հավաքում, աշխատում, որ բերի քո ընտանիքը պահի, որը քեզնից փոքր ա, ոչ թե մեծը, որ ինքը իրա մանկությունը դրա վրա յա վատնում, չի կարում ուրախացնի», նյութի հեղինակը արհամարհում է այն սկզբունքը, ըստ որի անհրաժեշտ է թեման փոխել, եթե երեխան այլայլված է:

Նյութում նաև նշվում է, որ «բակում Արամի հետ հասակակիցները գրեթե չեն շփվում, դպրոցում էլ զերծ չի մնում վիրավորանքներից ու ծեծից»: Այնուհետև տղան պատմում է. «Դպրոցում եղել ա, որ ինձի ասել են՝ դու ծաղիկ ես հավաքում, մենք քո հետ գործ չունենք, դու վատ ես ապրում, դու վաաբշե գործ չունես, չենք խաղա քո հետ: Մի անգամ ձեռքը կպել ա ինչ-որ իրի, ընկել ա, կոտրվել ա, ինձի խփել են դրա համար: - Դասարանո՞ւմ (լրագրող): - Այո»: Տվյալ դեպքում նյութի հեղինակները կարող էին գնալ

դպրոց՝ համոզվելու, որ տղայի խոսքերը հավաստի են, սակայն, ամենայն հավանականությամբ, դա չեն արել (նյութում ուսուցիչների և համադասարանցիների դիրքորոշումը բացակայում է): Դրանով իսկ խախտվել է վերոնշյալ սկզբունքը՝ երեխայից ստացված տեղեկությունների հավաստիությունը ճշտելու մասին՝ այն նպատակով, որպեսզի բացառվեն նրա կողմից չափազանցելը, ասեկոսեները որպես փաստ ներկայացնելը՝ լրագրողին դուր գալու կամ շողոքորթելու համար:

Հավաստիանալը, որ երեխային դպրոցում նեղացնում են, իրավիճակը պարզելու փորձեր անելն անհրաժեշտ էին նաև այն պատճառով, որ հենց երեխայի համար ծայրահեղ կարևոր է «հասկացված ու սիրված լինելը»:

Տղա. «Ես կուզեի, որ ինձի լավ վերաբերվեն, որ իմ հետ խաղան կամ ուզեին շփվել»:

Լրագրող. «Դա քեզ ի՞նչ կտար»:

Տղա. «Կտար ուրախություն, երջանկություն, ու հանգիստ կապրեի»:

Հաղորդման հեղինակներն ըստ էության հաշվի չեն առել այն փաստը (իսկ հնարավոր է, որ նաև օգտվել են դրանից), որ երեխաները, անկախ սոցիալական վիճակից, հաճախ դժգոհ են լինում դպրոցական միջավայրում իրենց սոցիալիզացման աստիճանից: Սրելով այս թեման, նրանք փաստորեն ավելացրին ևս մեկ առիթ (պարտադիր չէ՝ հիմնավորված) իրենց հաղորդման հերոսի ծանր ապրումների համար:

«Կենտրոն» հեռուստաալիքի «Ես կամ» հաղորդումը նույնպես նվիրված է սոցիալապես անպահով ընտանիքիների երեխաներին և կառուցված է հետևյալ սկզբունքով՝ երեխաները նամակ են գրում հաղորդման խմբագրություն, որտեղ պատմում են իրենց երազանքի մասին՝ հանդիպելու որևէ հայտնի մարդու և որևէ նվեր ստանալու: Հաղորդավարը՝ հոգևորական, ընտրում է նամակը, կազմակերպում երեխայի և հայտնի մարդու հանդիպումը: Վերջինս երեխայի հետ մի օր է անցկացնում և նրան նվիրում այն, ինչ ցանկացել էր նամակում: Հաղորդումը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ դժբախտություն և երջանկություն: Առաջին մասում ցույց են տրվում փոքրիկ հերոսի կյանքի ողջ թշվառությունն ու ծանրությունը, իսկ երկրորդում՝ այն ուրախությունը, որ նրան պատճառում է իր ցանկության իրականացումը:

Այս շարքի թողարկումներում խախտվել են նաև հետևյալ սկզբունքները՝ չպատճառել երեխային հոգեկան ցավ ՝ սադրելով նրան վերապրել տառապանքները, անտեղի հարցեր չտալ և բեմադրված տեսարաններ չստեղծել:

Այսպես, «Ես կամ» հաղորդման 2015թ. հունիսի 21-ի թողարկումը պատմում էր մի տղայի մասին, որն իր ընտանիքի հետ ապրում է վագոնում և երազում է մեծ քարե տան մասին: Նյութում մայրը, լաց լինելով, պատմում է ընտանիքի ծանր վիճակի մասին, ներս է մտնում երեխան և հարցնում մորը, թե ինչու է լալիս, գրկում է նրան, համբուրում: Բացի նրանից, որ այս տեսարանը բեմադրված է և այն բանից հետո, որ արդեն ցուցադրել են այդ ընտանիքի կյանքի ծանր պայմանները, լրագրողը հարցնում է երեխային. «Դուք լա՞վ եք ապրում»: Այս անհարկի հարցին ի պատասխան երեխան միայն ուսերն է թոթվում:

«Ես կամ» հաղորդման 2015թ. հունիսի 14-ի թողարկման հերոսը մի տղա էր Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) Երեխաների աջակցության կենտրոնից: Նա իր կյանքի մասին պատմում էր ծանր ապրումներով: Ցույց են տալիս մի տեսարան, երբ տղան սենյակում միայնակ նստած լաց է լինում: Այլ կերպ ասած, երեխային անընդհատ ստիպում են նորից տառապել, այդպիսով ստեղծելով այնպիսի պատկեր, որը կնպաստի լսարանի մոտ կարեկցանքի ուժեղացմանը:

Ավելին, հաղորդման ժամանակ հոգևորականը, երեխայի ընտանիքը ներկայացնելիս ասում է, որ նրա հայրը հոգեկան հիվանդ է: Նույնը կրկնում է ՀՕՖ-ի Կենտրոնի մանկավարժը: Տղայի հոր մասին այդ կարգի մանրամասները նրա պատմությանը ոչինչ չեն ավելացնում, միևնույն ժամանակ դրանք կարող են երեխային իր հասակակիցների ծաղրի առարկան դարձնել («քո հայրը գիժ է», «գժի տղա»):

Այսպիսով խախտվում է **«Մասնավոր կյանքի, խորհրդապահության և անանունության իրավունք»** խմբի միանգամից երկու սկզբունք.

- Երեխաների ծնողների կամ խնամակալների մասին կոնկրետ տվյալների հրապարակման արգելք (բացի նրանց հասարակական դիրքի և ունեցվածքի մասին ընդհանուր տվյալներից), եթե չկա դրա ծայրահեղ անհրաժեշտությունը *(հետազոտված 2 նյութում)*,

- Երեխաների հիվանդությունների/ապրելու ծանր պայմանների, հնարավոր հետևանքների մասին այնպիսի մանրամասների հրապարակման արգելք, որոնք ներկայում կամ ապագայում կարող են բարդացնել նրա կյանքը, հարաբերությունները շրջապատի հետ, նրան օտարված կամ ծաղրի առարկա դաձնել *(հետազոտված 3 նյութում)*:

Անթույլատրելի է նաև այն տեսարանը, երբ ՀՕՖ-ի Կենտրոնի բակում հավաքված երեխաները հաղորդման հերոսին ճանապարհում են հայտնի մարդու հետ հանդիպմանը: Տեսախցիկը խոշոր պլանով ցույց է տալիս երեխաների աչքերը, որոնցում պարզ երևում է, թե ինչքան կուզենային հայտնվել իրենց ընկերոջ տեղում: Եվ հոգևորականը, տղային տանելով, երեխաներին խոստանում է. «Ձեր հերթն էլ կգա, գիտեք»: Այս տեսարանը հնարավոր չէ այլ կերպ կոչել, քան կեղծ հույսերի խթանում:

Հունիսի 14-ի վերոնշյալ թողարկումը կրկնվել է նաև 2015թ. հունիսի 28-ին, սակայն նյութում ոչ մի ձևով չի նշվել, որ դա կրկնություն է: Այսինքն, այդպիսով, հունիսի 28-ի հաղորդումը, բացի վերը նշված թերություններից, պարունակում էր նաև «**Խոսքի և արտահայտման ազատության իրավունք, իր՝ երեխայի կյանքին վերաբերող որոշումների կայացման իրավունք»** խմբի մեկ սկզբունքի խախտում.

- Սոցիալապես խոցելի խմբերի երեխաների, անչափահաս մեղադրյալների/ամբաստանյալների մասնակցությամբ նկարահանումների/եթերի ժամկետի վրա հղման առկայության պարտադիր լինելը՝ հաղորդման կրկնության/այլ հաղորդումներում արխիվային նյութերի ցուցադրության ժամանակ *(1 նյութում)*:

«Ես կամ» հաղորդման մեկ ուրիշ՝ 2015թ. հունիսի 7-ի թողարկման հերոսի պատմածը ավելորդ մանրամասներ են, որոնք նյութին ոչինչ չեն ավելացնում, սակայն կարող են երեխային վնասող գործողությունների կրկնության պատճառ դառնալ... Նա պատմում է, որ հասակակիցներն իրեն «բոմժ» են ասում: Նրա խոսքերն ուղեկցվում են հոգեկան ապրումներով (որոնք երբեմն խոշոր պլանով են ցուցադրվում), տեղ-տեղ բեմադրված տեսարաններով (ինչպես օրինակ, տղան մոտենում է պատուհանին և տխուր նայում է դիմացը կառուցված իր երազանքի տանը):

Մոնիտորինգի ժամանակահատվածում «Արմենիա» հեռուստաալիքով մեկնարկեց «Հայի աչքեր» հաղորդումը, որը հռչակվեց որպես բարեգործական մարաթոն: Հաղորդման երկու թողարկումներն էլ, որոնք հեռարձակվել են մոնիտորինգի ժամանակահատվածում, կառուցված էին հետևյալ սկզբունքով. տաղավար էին հրավիրվում սոցիալապես անպահով ընտանիքներ, տեսանյութում պատմում էին նրանց կրած դժվարությունների մասին, այնուհետև այդ ընտանիքներին տրվում էր նյութական օգնություն:

«Հայի աչքեր» հաղորդման երկու թողարկումներում էլ արձանագրվել են «Երեխաների մասնակցությամբ հարցազրույցների/հաղորդումների վարման կանոններ» խմբի (երեխային հոգեկան ցավ պատճառել, նրան ստիպել՝ կրկին վերապրելու իր կրած տառապանքներն ու ցավը, անհարկի հարցեր օգտագործել, բեմադրված տեսարանների առկայություն), «նյութի հերոսների կերպարների կաղապարայնացում» (զոհ-երեխաներ) խմբի, « նյութի մատուցման ձև» խմբի (այնպիսի տեսաշարերի և բանավոր նկարագրության առկայություն, որը միայն խղճահարություն է առաջացնում և երեխային տառապանք է պատճառում) նույն խախտումները:

Մեկնաբանելով մոր այցը մանկատուն («Հայի աչքեր», 2015թ.հունիսի 13), ուր նա հանձնել է իր երեք երեխաներին (նյութական ծանր պայմանների և բնակարան չունենալու պատճառով) լրագրողն ասում է. «Խոսքերը մնացին շուրթերիս, մարմինս քարացավ ու ամռան արևի տակ դողաց, արցունքն աչքերումս ցամաքեց, իսկ հոգիս լաց եղավ, երբ նկարահանող խմբի հետ մեքենայից դուրս գալուն պես ականատես եղանք մոր ու աղջիկների հանդիպմանը, երբ ի զարմանս մեզ՝ ջերմությամբ ու կարոտով Հեղինեի գիրկը վազեցին ոչ միայն հարազատ զավակները. մանկատան մյուս փոքրիկներն էլ էին Հեղինեի մեջ իրենց մորը փնտրում, նրանից ակնկալում իրենց անհրաժեշտ մայրական ջերմությունը»:

Այնուհետև տեսանյութում լրագրողը մանկատան բակում զրուցում է երեխաների հետ.«Իսկ մայրիկը հաճա՞խ է գալիս այցելության ձեզ»:

Երեխա. «Հա»:

Լրագրող. «Բայց կարոտում ես չէ՞, հասցնում ես, չէ՞,կարոտել»:

Երեխա. «Հա»:

Լրագրող. «Ի՞նչ երազանք դու ունես»:

Երեխա. «Ես ուզում եմ, որ մայրիկս ինձ գա ու տուն տանի, մենակ ինձ չէ, ու քույրիկներիս տուն տանի, ու մենք լավ ապրենք: Էդ երազանքն ունեմ»:

Դրանից հետո, արդեն տաղավարում էին շարունակվում անտեղի հարցերը, որոնք երեխաներին տառապանք էին պատճառում:

Լրագրող. «Դուք իրարից անջատ պատկերացնո՞ւմ եք, երեխեք, պատկերացնո՞ւմ ես, որ մայրիկից բաժան, անջատ պիտի ապրես»:

Երեխան գլխով ոչ է ասում:

Երկրորդ ընտանիքի մասին տեսանյութը ուղեկցվում է հետևյալ հեղինակային տեքստով.«Մենք այսօր կհյուրընկալվենք Ղազարյանների ընտանիքին ու կտեսնենք՝ ինչպիսի պայմաններում են նրանք ապրում, բայց այն, որ սա տուն չէ, մենք կհամոզվենք: Ասեմ ավելին, ցավալի է, բայց սա նույնիսկ տնակ չէ: (...) Ծայրահեղ վատ, անմարդկային պայմաններում ապրելով՝ այս մարդիկ չեն բողոքում, չեն պահանջում: Միայն հիշում են կացարանի ամեն անկյունում իրենց սպասվող թակարդն ու փորձում շրջանցել այն: (...) Ցավալի է, երբ մանուկներն են գիտակցում իրենց թշվառ ապրելակերպը, իրենց անօթևան լինելն ու երազում են տանիք ունենալու մասին: Ինչպես փոքրիկ Եղիշը ինձ խոստովանեց, կտուր է ուզում, որից այն կողմ ջերմություն, ապահովություն, սեր ու բարեկեցիկ կյանք կլինի»: (Ցուցադրում են լաց լինող երեխային):

Նույն տեսանյութում ասվում է այն մասին, որ առանց մոր օգնության երեխաները արևի երես տեսնել չեն կարող: Տան երկրորդ հարկ տանող աստիճաններն այնքան վատ վիճակում են, որ տնից դուրս գալիս մայրը երեխաներին փակում է երկրորդ հարկում, որ նրանք չկարողանան ներքև իջնել: Այնուհետև ցույց են տալիս, թե ինչպես է կինը դույլերը ձեռքին տուն մտնում, երեխան վերևից կանչում է՝ «մամա, մամա»: Մայրը հուզմունքից դույլը շրջում է և ջուրը թափում: Երեխան գոռում է, որ ջուրը թափվել է, իսկ մայրը նրան հանգստացնում է, թե ինքն նորից կբերի:

Ամենայն հավանականությամբ, այս նյութի հեղինակները վստահ են, որ ընտանիքի ծանր վիճակը միայն բառերով նկարագրելը քիչ է, և անհրաժեշտ է լսարանին ամեն ինչ մանրամասն ցուցադրել:

Առավել անընդունելի բեմականացումներ են արվել «Հայի աչքեր» հաղորդման 2015թ. հունիսի 20-ի թողարկմանը: Տեսանյութում ցույց են տալիս, թե ինչպես են մորը՝ չորս երեխաների հետ դուրս հանում տնից. շեմքից դուրս են շպրտում նրանց իրերը, դուռն են շրխկացնում, իսկ հեկեկացող աղջիկները իրերը հավաքում- տոպրակն են լցնում և իջնում աստիճաններով: Այնուհետև իրերի ծանր տոպրակի կադրերին հաջորդում է փողոցի տեսարանը. մայրը, երեխաների հետ փողոցում նստած, հացը կիսում և բաժանում է դուստրերին:

Մեկ այլ տեսարանում մայրը փողոցն է ավլում, իսկ երեխաները փողոցի եզրին նստած, մորն են սպասում: Լրագրողը հետևյալ խոսքերով մոտենում է երեխաներին. «Որքա՞ն ուժեղ կարող է լինել մարդը, հարց, որի պատասխանը մենք բոլորս ունենք մեր ներսում թաքցրած, սակայն տեսնում ու հասկանում ենք մեր ուժեղ լինելը միայն այն ժամանակ,

երբ կյանքն է ստիպում (...) Պայքարի ամենաուժեղ զենքը երեխան է, զավակը, հանուն որի այս կյանքում պատրաստ ես ամեն ինչի, կրկնում եմ՝ ամեն ինչի»:

Լրագրող. «Բարև ձեզ: Կարող ե՞մ ձեր հետ նստել, բա ի՞նչ եք անում այստեղ»:

Երեխա. «Մաման ստեղ գործ ա անում» (ցույց են տալիս փողոցն ավլող մորը):

Լրագրող. «Դուք իրե՞ն եք սպասում, բայց ո՞ւր պիտի գնաք»:

Երեխա (արցունքները զսպելով). «Չգիտեմ»:

Սա դիտելուց հետո տաղավարում գտնվող տեսանյութի փոքրիկ հերոսուհիներից մեկը լաց եղավ: Վարող. «Ինչո՞ւ ես լացում, հը՞ն: Մի հատ արի էստեղ նստի (կանչում է իր մոտ), արի, արի ինձ մոտ (...) Նստի, չլացես, չլացես: Լավ»:

Այլ կերպ ասած, հետապնդելով կարիքի մեջ հայտնվածներին օգնելու վեհ նպատակ, ԶԼՄ-ներն այդ ընթացքում «ունքը շինելու տեղ՝ աչքն էլ են հանում»: Եվ դա հետին մտքով չի արվում, ավելի շուտ՝ երեխաների և մանկության հիմնախնդիրների լուսաբանման էթիկական սկզբունքների չիմացությունից կամ դրանք անտեսելուց: Ցանկանալով լսարանի ուշադրությունը գրավել սոցիալական սուր հարցերի վրա, ԶԼՄ-ները հաճախ մոռանում են, որ ցանկացած անդրադարձ երեխային՝ պահանջում է հատուկ մոտեցում և նրբանկատություն, որ «մի վնասիր» սկզբունքն այստեղ շատ ավելի մեծ նշանակություն է ստանում: ԶԼՄ-ների նպատակը (բարի գործ անել) չի արդարացնում այն միջոցները, որոնց նրանք դիմում են դրան հասնելու համար. չի կարելի երեխային ստիպել «խաղալ» արդեն ապրված կամ ապրվող հոգեկան ցնցումը, ստիպել նրան պատմել այն մասին, ինչն արցունք է ծնում, ի ցույց դնել նրան որպես մեկի, որը խղճահարությունից բացի, ուրիշ ոչինչ չի հարուցում:

Առանձնահատուկ նրբանկատություն էր պահանջում նաև 2015թ. հունիսի 28-ի «Սուր անկյուն» հաղորդման նյութը («Արմենիա» հեռուստաալիք): Տեսանյութում պատմվում էր Հայաստանում ՄԻԱՎ վարակակիր երեխաների մասին: Այստեղ բերվում էին վիճակագրական տվյալներ, ներկայացվում էր իրավիճակը երկրում և այլն: Այսինքն խիստ զգայուն թեման սկզբում շատ տակտով էր լուսաբանվում՝ այնքան ժամանակ, քանի դեռ չցուցադրվեց խմբագրությունում նստած լրագրողի և արտասահմանում ապրող ընտանիքի զրույցը սկայպով: Մայրը և նրա անչափահաս դուստրը պատմում էին, որ իրենք ՄԻԱՎ վարակակիր են, սակայն ապրում են լիարժեք կյանքով և շփման խնդիրներ չունեն՝ ոչ աշխատանքի վայրում, ոչ դպրոցում: ՄԻԱՎ վարակակիր երեխայի մասին այս պատմությունը կարող էր լավ օրինակ դառնալ այն բանի, որ նման հիվանդությունով երեխաներն իրենց օտարված չեն զգում, եթե նյութում չբերվեին աղջկա անուն-ազգանունը, բնակության երկիրը, իսկ աղջկա դեմքը քողարկված լիներ, ձայնը՝ փոփոխված: Այսինքն, եթե գործադրված լինեին բոլոր միջոցները, որոնք թույլ չէին տա նույնակացանել երեխային: Այս ամենը չի արվել: Ավելին, նյութում ոչ մի նշում չկա այն մասին, որ դրա հերոսները տվել են իրենց համաձայնությունը՝ ամբողջական նույնականացման համար, և հասկանում/համաձայն են, որ իրենց տված հարցազրույցը եթեր հեռարձակվի: Այն դեպքում, երբ այլ երեխաներ (համատեքստից հետևում էր, որ նրանք Հայաստանում ապրող ՄԻԱՎ վարակակիր երեխաներ են) ցուցադրվում էին

ընդհանուր պլանով և քողարկված դեմքերով: Այսինքն, ինքնաբերաբար ենթադրվում է, որ նյութի հեղինակները գիտակցում էին Հայաստանում ապրող ՄԻԱՎ վարակակիր երեխայի նույնականացումը բացառելու անհրաժեշտությունը, այդ ընթացքում ջանք չթափելով նույնն անել Հայաստանից դուրս ապրող երեխայի դեպքում:

Այսպիսով, նյութում արձանագրվել են.

- մեկ խախտում **«Մասնավոր կյանքի, խորհրդապահության և անանունության իրավունք»** խմբում, որտեղ թվարկվում են մի շարք պայմաններ, որոնց դեպքում պետք է պահպանվի ցանկացած տվյալի և նյութի հրապարակման արգելքը, որով հնարավոր լինի երեխային նույնականացնել՝ ճանաչել, եթե ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր է, սպիդով հիվանդ է կամ այդ հիվանդությունից է մահացել (բացի այն դեպքերից, երբ երեխան, ծնողները և խնամակալը համաձայնում են, որ երեխայի անունը հրապարակվի, ինչի մասին նյութում հստակ նշում կա),

- **«Խոսքի և արտահայտման ազատության իրավունք, իր՝ երեխայի կյանքին վերաբերող որոշումների կայացման իրավունք»** խմբի հետևյալ սկզբունքների 2 խախտում.

- Երեխան և նրա համար պատասխանատու անձը պետք է հասկանան, որ հարցազրույց են տալիս/մասնակցում են նկարահանումների, որոնք եթեր են հեռարձակվելու (ինչի մասին նյութում հստակ նշում կա),

- Երեխան և լսարանը տեղեկացված են, որ երեխայի հետ հեռախոսային/համացանցով խոսակցությունը եթեր է գնալու (ինչի մասին նյութում հստակ նշում կա):

Այս համատեքստում որպես զգայուն թեմաներին անդրադարձի դրական օրինակ կարելի է բերել «ATV» հեռուստաալիքով հեռարձակվող «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման 2015թ. հունիսի 22-ի թողարկումը, որը նվիրված էր մանկապղծության թեմային: Հաղորդման հեղինակները պահպանել էին բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հերոսների անանունությունը ապահովելու համար. սեռական բռնության ենթարկված երեխայի մոր և տատիկի դեմքները թաքցված էին դիմակի տակ, փոփոխության էին ենթարկված բնակության վայրը, անունները և նույնականացնող այլ մանրամասներ (ինչի մասին վարողը հատուկ տեղեկացրեց), ինչպես նաև՝ երեխայի ձայնը հեռախոսով:

«Կիսաբաց լուսամուտներ» շարքի 2015թ. հունիսի 30-ի թողարկման հյուրն էր սոցիալապես անապահով մի ընտանիք: Մի պահ տաղավարում նստած աղջիկը հուզվեց, և վարողն անմիջապես փոխեց զրույցի թեման:

Նույն շարքի 2015թ. հունիսի 4-ի հաղորդմանը մայրը մեջբերում է բժշկին, որն ասել է, որ իր երեխան դեբիլ է մեծանալու: Վարողն, ընդհատելով կնոջը, նրան դիտողություն արեց, որ չի կարելի երեխայի մասին այդպես խոսել: Այն դեպքում, երբ հաղորդման (որը տեսագրված էր հեռարձակվում) հեղինակները կարող էին առանց բովանդակությունը վնասելու պարզապես մոնտաժել այդ հատվածը:

Նյութի մատուցման ձևի ևս մեկ խախտում է արձանագրվել «Երկիր մեդիա» հեռուստաալիքի 2015թ. հունիսի 2-ի եթերում՝ «Ազատ քաղաքացի» հաղորդման մեջ: Այդ

թեմատիկ խաղային թոք շոուի թողարկմանը խախտվել է գենդերային հավասարությունը. դպրոցական մի թիմում միայն աղջիկներ էին ներկայացված, իսկ մյուսում միայն մեկ տղա կար, մյուսներն աղջիկներ էին: Այսպիսով, խախտվել էր հետևյալ սկզբունքը.

- Երեխաներին նվիրված կամ նրանց մասնակցությամբ նյութում գենդերային հավասարակշռության պահպանումը:

Ընդհանուր առմամբ, հունիսին, Հ1-ի հետազոտված 11 հաղորդումներից վեցը նվիրված էին մանկության հիմնախնդիրներին կամ շոշափում էին այն, ընդ որում 4-ը՝ մանկական թիմային «Հայ ասպետ» վիկտորինան, մեկը՝«Ազատ գոտի» հասարակական-քաղաքական թոք շոուն (հունիսի 18-ին քննարկվում էր պարտադիր դպրոցական կրթության ժամկետի թեման) և սոցիալական թեմաներին նվիրված «Բարդ երկուշաբթի» թոք շոուն (հունիսի 29-ի սեզոնի եզրափակիչ թողարկման հյուրերը երեխաներն էին):

«Արմենիա» հեռուստաալիքի «Մարդկային գործոն» հասարակական-քաղաքական թոք շոուի հետազոտված 14 թողարկումներից երկուսը նվիրված էին մանկական թեմատիկային կամ շոշափում էին այն (հունիսի 1-ի թողարկումը և 15-ի թողարկումը, որի հյուրը «Ամենախելացին» մանկական վիկտորինայի հաղթողն էր): «Սուր անկյուն» կիրակնօրյա լրատվական ծրագրի հունիսի բոլոր 4 թողարկումները կրում էին «Խեղված ճակատագրեր» խորագիրը, որի հերոսների թվում նաև երեխաներ կային: Նույնը կարելի է ասել նաև «Հայի աչքեր» բարեգործական նոր մարաթոնի երկու թողարկումների մասին:

«Կենտրոն» հեռուստաալիքի «Ես կամ» շաբաթական ծրագրի հունիսի չորս թողարկումները պատմում էին այն բարեգործական օգնության մասին, որը ցուցաբերվում է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

«ATV» հեռուստաալիքի սոցիալական թեմաներով «Կիսաբաց լուսամուտներ» թոք շոուի 22 հաղորդումներից յոթը նվիրված էին մանկական թեմատիկային կամ շոշափում էին այն:

Հետազոտված հինգ ալիքներից միայն «Երկիր Մեդիան» ունի շաբաթական լրատվական մշտական հաղորդում («Մանկական երկիր»), որը վարում են երեխաները, և որի լուրերի բովանդակությունը նվիրված է մանկական թեմատիկային: Այս ալիքի եթերում հեռարձակվում է նաև «Ազատ քաղաքացի» մանկապատանեկան խաղային թոք շոուն, որի մասնակիցները առաջադրված թեմային «դեմ» կամ «կողմ» դիրքորոշում են հայտնում, և «Զարթոնքի սերունդ» մանկական թիմային խաղային մրցախաղը: Այսպիսով, «Երկիր Մեդիայի» բոլոր երեք հաղորդումները, որոնք դարձել են մոնիտորինգի առարկա, ունեին հստակ մանկական ուղղվածություն:

Վերևում բերված թվերը վկայում են այն մասին, որ մանկական թեմատիկան բավարար տեղ է գրավում հայաստանյան հեռուստաընկերությունների եթերում: Հետևաբար, մասնագիտական համընդհանուր նորմերին հետևելը հատուկ նշանակություն է ձեռք բերում:

ՀՈՒՆԻՍԻ 1՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ

Առանձին հետազոտության առարկա է դարձել 2015թ. հունիսի 1-ի եթերը, երբ նշվում է Երեխաների պաշտպանության համաշխարհային օրը: Ենթադրվում է, որ այդ օրը մանկական թեմատիկան հայտնվում է հայաստանյան ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում: Հետազոտվել են երեք համազգային հեռուստաալիքներով՝ Հ1, «Երկիր Մեդիա» և «Կենտրոն», հեռարձակված բոլոր նյութերը (բացառությամբ՝ գովազդայինի):

Երեխաների թեմատիկայի լուսաբանումը այդ օրը հիմնականում տեղեկատվական բնույթ է կրել. ներկայացվել են Հայաստանում տեղի ունեցած միջոցառումները՝ նվիրված Երեխաների պաշտպանության համաշխարհային օրվան:

Հ1-ի «հյուր տաղավարում» ձևաչափի «Մեր մեջ ասած» հաղորդման ժամանակ հունիսի 1-ին մեծահասակ վարողներին փոխարինել են երեխաները:

Հունիսի 1-ին երեխաները «Արմենիա» հեռուստաալիքի «Մարդկային գործոն» հասարակական-քաղաքական թոք շոուի և «Կենտրոն» հեռուստաալիքի «հյուր տաղավարում» ձևաչափի բանավիճային «Ուրվագիծ» հաղորդման հյուրերն էին:

Ամփոփելով վերն ասվածը, անհրաժեշտ է նկատել, որ հետազոտված ալիքների եթերում ընդհանուր առմամբ մանկական հիմնախնդիրները ժլատ են ներկայացվում՝ կամ երեխաների մասնակցությամբ խաղային ծրագրերի տեսքով, կամ սոցիալական օգնություն ցուցաբերելուն ուղղորդված հաղորդումների: Եվ հենց բարեգործական ձևաչափի հաղորդումներին են բաժին ընկնում մոնիտորինգի ժամանակահատվածում արձանագրված պրակտիկորեն բոլոր խախտումները:

Այսպիսով, կարելի է անուղղակի եզրակցության գալ, որ հայաստանյան եթերում գերակշռում են այն նյութերը, որոնք նվիրված են երեխաների հետ կապված հիմնախնդրի բացասական կողմին (առաջին հերթին՝ սոցիալական ծանր վիճակին), և շատ քիչ են դրական պատմություններն ու հաղորդումները, որոնք ներկայացնում են երեխաների աշխարհն իր ողջ բազմազանությամբ:

ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

2015թ. հունիսի 16-30

Հետազոտված ժամանակահատվածում (2015թ. հունիսի16-30-ը) բոլոր հինգ հեռուստաալիքներով հեռարձակված գովազդային նյութերի ընդհանուր քանակը եղել է 10,025: Դրանցից 228-ը (կամ 2.3%-ը) պարունակում էին երեխաների մասնակցությամբ կամ նրանց հասցեագրված գովազդի սահմանափակումների խախտումներ:

Ինչպես վերևում նշվեց, գովազդային նյութերում երեխաների իրավունքների խախտումների չափորոշիչները կազմվել են համապատասխան այն սահմանափակումներին, որոնք նախատեսված են ՀՀ գովազդի մասին օրենսդրությամբ:

Ինչպես ցույց տվեց մոնիտորինգը, 6 չափորոշիչներից հայաստանյան հետազոտված եթերում խախտվել է միայն մեկը.

- Անչափահասների համար չնախատեսված ապրանքների գովազդում երեխաների մասնակցության արգելք:

Ընդ որում, երեք հեռուստաալիքներում՝ «Արմենիա» (խախտում պարունակող 69 գովազդային նյութ), «Երկիր Մեդիա» (69) և «ATV» (67), այս խախտումները գովազդային նույն հոլովակներում էին՝ ACBA-Credit Agricole Bank-ի քարտերի, ատամի պրոթեզի ամրացման համար նախատեսված «Կորեգա» քսուքի, լվացքի մեքենաների համար նախատեսված «Կալգոն» նյութի և iDram առցանց վճարային համակարգի մասին:

Ակնհայտ է, որ վերը թվարկված գովազդը ոչ մի կերպ նախատեսված չէ երեխաների համար, և հետևաբար նրանց մասնակցությունը դրանցում ՀՀ գովազդային օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտում է:

«Կենտրոն» հեռուստաալիքի եթերում վերը թվարկված գովազդային հոլովակները չեն եղել, իսկ հեռարձակված այլ գովազդում խախտումներ չեն արձանագրվել:

Հ1-ի հետազոտված 69 գովազդային նյութերից 23-ում նույնպես ի հայտ են եկել երեխաներին չհասցեագրված գովազդում նրանց մասնակցության արգելքի խախտումներ: Այդ բոլոր խախտումները եղել են Արդշինբանկի գովազդային հոլովակներում:

Նշենք, որ Հ1-ում, ինչպես հայտնի է, Հանրային հեռուստատեսության համար գործում է առևտրային գովազդի արգելքը, որը Ազգային Ժողովում ընդունվել է 2014թ. դեկտեմբրի 17-ին, իսկ ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի սկզբներից: Այդ սահմանափակումը չի տարածվում սոցիալական ուղղվածության հոլովակների, ինչպես նաև՝ մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հաղորդումների հովանավորների հիշատակումների վրա (վերջինների հաճախականությունը և տևողությունը սահմանվում է օրենքով):

Դրա հետ մեկտեղ, հետազոտության ժամանակահատվածում Արդշինբանկի հիշատակումներից պարզորոշ կերպով չէր հասկացվում՝ արդյո՞ք վերջինս հովանավոր է հանդիսանում և ո՞ր հաղորդումների: Սա հիմք է տալիս այդ հիշատակումները դիտարկել որպես գովազդ, որը ՀՀ օրենսդրության խախտում է:

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մոնիտորինգի ընթացքում հայաստանյան հեռուստաեթերում երեխաների իրավունքների պահպանության չափորոշիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ խախտումները մեծ մասամբ կանխամտածված չեն, այլ պայմանավորված են ԶԼՄ-ներում և լրագրողների մոտ երեխաների և մանկության խնդիրների լուսաբանման էթիկայի հատուկ գիտելիքների բացակայությամբ: Այդ բացերը լրացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել ԶԼՄ-ների ներկայացուցիչների գիտելիքների մակարդակը՝ զանազան թրեյնինգների և կրթական ծրագրերի միջոցով:

2. ԶԼՄ-ների պատասխանատվության մակարդակի բարձրացմանը կնպաստեն նաև մեդիայի բովանդակության զանազան հետազոտություններ, որոնք վեր կհանեն մանկական հիմնախնդիրների լուսաբանման դրական և բացասական փորձը: Մոնիտորինգները, որոնք յուրահատուկ «դրսի հայացք» են, զգալիորեն թեթևացնում են սեփական սխալները ուղղելու՝ լրագրողների գործը:

3. Հայաստանյան հեռուստաեթերի շատ հաղորդումներ արտասահմանյան առաջատար ԶԼՄ-ների հաղորդումների նմանակումներն են, որոնք լի են էթիկական սկզբունքների խախտումներով և որակյալ լրագրության հիմնարար սկզբունքների անտեսմամբ: Հետևաբար, հայրենական ԶԼՄ-ները պետք է ավելի ընտրողական լինեն արտասահմանյան գործընկերների նկատմամբ կողմնորոշման հարցում, մասնավորապես, Հայաստանում մեծ ժողովրդականություն վայելող ռուսաստանյան թոքշոուներ վարողների դեպքում:

4. Հայաստանի կարգավորող մարմինները պետք է ավելի շատ ուշադրության արժանացնեն հայրենական եթերի բովանդակությունը և հետևողականորեն բացահայտեն այնտեղ թույլ տրվող խախտումները, հատկապես այն դեպքերում, որտեղ գործում են հստակ օրենսդրական նորմեր:

5. Հետազոտությունը պարզել է նաև, որ անհրաժեշտ է երեխաների և մանկության հիմնախնդիրների լուսաբանման մի շարք սկզբունքներ ամրագրել ՀՀ օրենսդրությամբ: Երեխաների իրավունքներին վերաբերող և Հայաստանի այսօրվա գովազդային և հեռարձակման օրենսդրության դրույթները շատ ընդհանուր և մակերեսային են կարգավորում տվյալ ոլորտը:

6. Հիմնախնդրի լուծման մեջ կարևոր դեր կարող են ունենալ ԶԼՄ-ների ինքնակարգավորման մարմինները, որոնց գործունեությունը տեղեկատվական վեճերի լուծման, լրագրողական էթիկայի համապատասխան սկզբունքների առավել ակտիվ ներդրման ուղղությամբ՝ անհրաժեշտ է հետևողականորեն առաջ մղել:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ (Հ1) - 2001թ. հիմնադրված Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն է: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Առաջին ալիքի օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտման առարկա են եղել «Ազատ գոտի» հասարակական-քաղաքական թոք շոուն, «Բարդ երկուշաբթի» սոցիալական թոք շոուն և «Հայ ասպետ» մանկական մրցախաղը:

«ԱՐՄԵՆԻԱ» - համազգային մասնավոր հեռուտաընկերություն: Հիմնադրվել է 1998թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտման առարկա են եղել «Սուր անկյուն» կիրակնօրյա տեղեկատվական-վերլուծական հաղորդումը, «Մարդկային գործոն» հասարակական-քաղաքական թոք շոուն և «Հայի աչքեր» բարեգործական մարաթոնը:

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» - համազգային մասնավոր հեռուտաընկերություն: Հիմնադրվել է 2004թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտման առարկա են եղել «Մանկական երկիր» մանկական տեղեկատվական հաղորդումը, «Ազատ քաղաքացի» մանկապատանեկան թոք շոուն և «Զարթոնքի սերունդ» մանկական մրցախաղը:

«ԿԵՆՏՐՈՆ» - համազգային մասնավոր հեռուտաընկերություն: Հիմնադրվել է 2004թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտման առարկա է եղել «Ես կամ» սոցիալական-բարեգործական հաղորդումը:

«ATV» - Երևանում հեռարձակվող մասնավոր հեռուտաընկերություն: Հիմնադրվել է 2009թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հետազոտման առարկա է եղել «Կիսաբաց լուսամուտներ» սոցիալական թոք շոուն:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

1-30 հունիսի, 2015թ.

ՀԵՌՈՒՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հայաստանի հանրային հեռուսատեսության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «ATV»

1-30 հունիսի, 2015թ.

	Ընդամենը (մվր)
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը	**101**
Երեխաների իրավունքների պահպանության չափորոշիչների խախտում պարունակող նյութերի քանակը	**11**

		Ընդամենը (մվր)
	I. Խոսքի և արտահայտման ազատության իրավունք, իր՝ երեխայի կյանքին վերաբերող որոշումների կայացման իրավունք	**3**
1.	Երեխայի կամ նրա համար պատասխանատու անձի (ծնող, խնամակալ, կրթական հաստատության/մանկատան ադմինիստրացիայի, խնամակալ և հոգաբարձուական մարմինների ներկայացուցիչ) համաձայնության պարտադիր լինելը երեխայի հետ հարցազրույց անցկացնելու, տեսանկարահանում կատարելու, նրանց վերաբերող լուսանկարների և փաստագրական նյութերի հանրայնացման համար, այդ թվում՝ այդ կարգի նյութերի՝ ապագայում օգտագործման համար (հաղորդումների լուսագրերում, արխիվային նյութեր ցուցադրելիս, հաղորդումների կրկնություններում և այլն)	0
2.	Սոցիալապես խոցելի խմբերի երեխաների, անչափահաս մեղադրյալների/ամբաստանյալների մասնակցությամբ նկարահանումների/եթերի ժամկետի վրա հղման առկայության պարտադիր լինելը՝ հաղորդման կրկնության/այլ հաղորդումներում արխիվային նյութերի ցուցադրության ժամանակ	1
3.	Երեխան և նրա համար պատասխանատու անձը պետք է հասկանան, որ հարցազրույց են տալիս/մասնակցում են նկարահանումների, որոնք եթեր են հեռարձակվելու (ինչի մասին նյութում հստակ նշում կա)	1
4.	Երեխան և լսարանը տեղեկացված են, որ երեխայի հետ հեռախոսային/համացանցով խոսակցությունը եթեր է գնալու (ինչի մասին նյութում հստակ նշում կա)	1
5.	Երեխայի համար հարմարավետ պայմանների առկայությունը հարցազրույցի ժամանակ/հաղորդմանը մասնակցելիս	0
6.	Երեխայի համար առանձնապես զգայուն, ցավոտ թեմաներով հաղորդումների/հարցազրույցների ժամանակ հնարավորինս ապահովել նրա համար մտերիմ մարդու ներկայությունը իր կողքին	0
7.	Երեխաների համար բացասական թեմատիկայով նյութերի առատությունը (սոցիալական ծանր վիճակ, հանցավորություն, բռնություն, դաժան վերաբերմունք, ռազմական կամ տարերային աղետների հետևանքներ)՝ ի վնաս դրական, երեխաների աշխարհն իր ողջ բազմազանությամբ ներկայացնող տեղեկությունների *(տվյալ չափորոշիչը վերաբերում է ոչ թե կոնկրետ հաղորդմանը/նյութին, այլ մոնիտորինգի ժամանակահատվածում ուսումնասիրված բոլոր հաղորդումներին/նյութերին)*	0
8.	Նյութերում գիտական այն փաստերի, պատմական իրողությունների մեկնաբանությունները, որոնք կարող են երեխաների կրթության, մտավոր զարգացման վրա բացասաբար ազդել	0
9.	Այնպիսի գաղափարների պրոպագանդան, որոնք սուր հակասության մեջ են համամարդկային արժեքների և համընդհանուր բարոյական նորմերի հետ և կարող են երեխաների դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունենալ	0

			Ընդամենը (մվր)
	II. Մասնավոր կյանքի, խորհրդապահության և անանունության իրավունք		**6**
1.	Երեխայի, նրա եղբայրների, քույրերի կամ հասակակիցների համար հնարավոր վտանգի առկայության պարագայում, ցանկացած տվյալների և նյութերի (լուսանկարներ, տեսագրություններ կամ այլ փաստական տեղեկություններ) հրապարակման արգելքը, որոնցով հնարավոր լինի երեխային նույնականացնել՝ ճանաչել		0
2.	Երեխայի, նրա եղբայրների, քույրերի կամ հասակակիցների համար հնարավոր վտանգի առկայության պարագայում, հրապարակման մեջ ոչ թե կոնկրետ այդ երեխայի/նրա հիմնախնդրի, այլ ընդհանուր առմամբ այդ կարգավիճակում գտնվող երեխաների հիշատակման սկզբունքի պահպանությունը		0
3.	Ցանկացած տվյալի և նյութի հրապարակման արգելքը, որով հնարավոր լինի երեխային նույնականացնել՝ ճանաչել,	- եթե նա սեռական բռնության կամ շահագործման զոհ է, կամ ինքն է ֆիզիկական կամ սեռական բռնություն կիրառել (օրինակ, արգելվում է օգտագործել «արյունապղծություն» բառը կամ այլ կերպ ցուցադրել երեխայի և բռնարարի կապը, որը թույլ կտա երեխային նույնականացնել որպես սեռական հետապնդման զոհի),	0
		- եթե ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր է, սպիդով հիվանդ է կամ այդ հիվանդությունից է մահացել (բացի այն դեպքերից, երբ երեխան, ծնողները և խնամակալը համաձայնում են, որ երեխայի անունը հրապարակվի, ինչի մասին նյութում հստակ նշում կա),	1
		- եթե կասկածվում, մեղադրվում կամ դատապարտվել է հանցագործություն կատարելու համար,	0
		- եթե երեխան ներկայում կամ նախկինում մասնակցել է ռազմական գործողությունների (երեխայի համար հնարավոր վտանգի առակայության դեպքում),	0
		- եթե երեխան ապաստան է խնդրում, փախստական է կամ վերաբնակիչ (երեխայի համար հնարավոր վտանգի առակայության դեպքում)	0
4.	Երեխայի նույնականացման արգելքի պահպանումը, եթե նրա ծողները հակասոցիալական կամ հանցավոր գործունեություն են ծավալել (հարբեցող, թմրամոլ ծնողներ և այլն)		0
5.	Երեխաների ծնողների կամ խնամակալների մասին կոնկրետ տվյալների հրապարակման արգելք (բացի նրանց հասարակական դիրքի և ունեցվածքի մասին ընդհանուր տվյալներից), եթե չկա դրա ծայրահեղ անհրաժեշտությունը		2
6.	Երեխաների հիվանդությունների/ապրելու ծանր պայմանների, հնարավոր հետևանքների մասին այնպիսի մանրամասների հրապարակման արգելք, որոնք ներկայում կամ ապագայում կարող են բարդացնել նրա կյանքը, հարաբերությունները շրջապատի հետ, նրան օտարված կամ ծաղրի առարկա դաձնել		3
7.	Հաղորդման տեսաձայնային միջավայրի արգելքի պահպանումը՝ խուսափելու համար երեխային նույնականացնելուց, եթե անհրաժեշտ է պահպանել երեխայի անանունությունը		0

		Ընդամենը (մվր)
	III. Երեխաների մասնակցությամբ հարցազրույցների/հաղորդումների վարման կանոններ	**23**
1.	Հարցազրույցի համար երեխաներին ընտրելիս բացառել սեռային, ռասայական, կրոնական, սոցիալական կարգավիճակով, կրթության մակարդակի և ֆիզիկական առանձնահատկություններով պայմանավորված խտրականությունը	0
2.	Խուսափել հարցազրույցի ընթացքում երեխային հոգեկան ցավ պատճառելուց, նրան ստիպելուց՝ կրկին վերապրելու իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները և իր կյանքի այլ ծանր պահերը	8

3.	Խուսափել երեխայի, նրա ընտանիքի անդամների և ընկերների ազգությանը, մշակույթին, կրոնին, բնակության վայրին վերաբերող՝ իրենց համար նվաստացուցիչ արտահայտությունների կամ մեկնաբանությունների, եզրույթների/պիտակների գործածումից (օրինակ, քո հայրը անհույս հարբեցող է, դու՝ հանցագործ)	0
4.	Խուսափել երեխային սադրելուց՝ վատ արտահայտվել իր հարազատների, ընկերների, բնակության վայրի և այլնի մասին	0
5.	Բացառել հարցազրույցի ժամանակ երեխայի վրա ճնշումը (չշտապեցնել նրան, չստիպել՝ խոսել ավելի արագ)	0
6.	Խուսափել հարցերին պատասխանել դժվարացող երեխայի չիմացությունը կամ անկրթությունը ընդգծելուց	0
7.	Ցուցադրել, որ երեխային որպես հավասարի եք վերաբերվում: Բացառել հովանավորչական պահվածքը, վերից նայելու վերաբերմունքը, սեփական խելքը և գիտելիքներն ընդգծելը, երեխայի անունից կամ նրա փոխարեն ելույթ ունենալը (իր բառերը նրա «բերանը դնելը»), երեխային ընդհատելը, երեխայի ասածները որպես զվարճանք, կատակ մատուցելը	0
8.	Խուսափել օգտագործելուց անհարկի և այնպիսի հարցեր, որոնք կարող են ցավ/վախ պատճառել, այնպիսի հարցեր, որոնց երեխաները չեն կարող պատասխանել, կամ կարճ աբստրակտ հարցեր (օրինակ, «այնպես չէ՞», «հասկանալի՞ է»), որոնք պահանջում են անբովանդակ, միավանկ պատասխաններ («այո», «ոչ»)	4
9.	Խուսափել երեխաների մեջ կեղծ հույսեր արթնացնելուց՝ հարցազրույցին/հաղորդմանը մասնակցելը խթանելու համար: Անթույլատրելիությունը՝ բեմադրություններ անելու, երեխաներին մանիպուլյացիաների ենթարկելու, նրանց խնդրելու՝ ասել կամ անել այն, ինչը երեխաների սեփական պատմության մաս չի կազմում, սակայն անհրաժեշտ է տպավորիչ պատկեր ստանալու կամ ազդեցիկ ռեպորտաժ պատրաստելու համար: Անընդունելիությունը՝ սենսացիոն լուսաբանման օգտին չարաշահելու երեխայի շահերը	9
10.	Անթույլատրելիությունը՝ շարունակելու թեման կամ հարցազրույցը, եթե երեխան հուզված է, անհարմարություն է զգում, դառնում է ցրված, նվաղկոտ կամ գերզգայուն և այլն	1
11.	Խուսափել՝ օգտագործելուց երեխայից ստացված չստուգված տեղեկությունը, որպեսզի բացառվեն նրա կողմից չափազանցելը, ասեկոսեները որպես փաստ ներկայացնելը՝ լրագրողին դուր գալու կամ շողոքորթելու համար	1

		Ընդամենը (մվր)
	IV. Երեխաների թեմատիկայի լուսաբանման կարծրատիպեր	**5**
1.	Զոհ-երեխա	5
2.	Հանցագործ երեխաները որպես վտանգ հասարակության համար	0
3.	Հրեշտակ-երեխաներ (որոնք ուղղակի չեն կարող վատ բան անել)	0
4.	Համակրելի երեխաներ/համով մոռթիկներ, մեծահասակների համակրելի հավելվածները (համակրելի երեխաների աննպատակ ներկայացում, օգտագործում՝ նյութին հմայք ավելացնելու համար)	0
5.	Հրաշք/բացառիկ երեխաներ («արտասովոր խելացի/գեղեցիկ/ճարպիկ և այլն՝ նյութն ավելի հետաքրքիր դարձնելու համար)	0
6.	Աքսեսուար երեխաներ (ծնողների սեփականությունը)/նյութում ծնողների իրավունքները գերակշռում են նրանց երեխաների իրավունքներին	0
7.	«Էս դարի/թվի/հիմիկվա երեխաները….Իսկ մեր ժամանակ» (մեծահասակների անցյալի կարոտախտ)	0
8.	Մեծահասակների զվարճալիք երեխաներ (երեխաների լուրջ մեկնաբանությունների օգտագործում՝ մեծահասակներին ծիծաղեցնելու նպատակով)	0
9.	Բոլոր տղաներն ուժեղ են, բոլոր աղջիկները՝ թույլ (գենդերային կարծրատիպ)	0

		Ընդամենը (մվր)
	V. Նյութի մատուցման ձևը	**9**
1.	Նյութում երեխայի նկատմամբ հովանավորչական, մեծամիտ-զիջողական և այդ կարգի տոնայնության բացառում	0
2.	Խուսափել նյութում այնպիսի լուսանկարների, տեսաշարերի և գրաֆիկական այլ միջոցների չափից ավելի օգտագործումից, որտեղ երեխաները ներկայացված են նվաստացուցիչ պայմաններում և միայն խղճահարություն առաջացնող իրավիճակներում, որոնցում անտեսված է երեխաների՝ սեփական արժանապատվության զգացումը, և բացակայում է հարգանքը նրանց նկատմամբ	4
3.	Նյութում այնպիսի տեսաձայնային միջավայրի առկայության անթույլատրելիությունը, որը երեխայի ընտանիքը, համայնքը, հարազատ վայրերը ցույց տալիս նրան տառապանք է պատճառում	4
4.	Նյութում այնպիսի տեսաձայնային միջավայրի օգտագործումը, որը համապատասխանում է երեխայի, նրա կյանքի և դեպքի մասին պատմությանը և չի ծառայում նյութի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, դրան սենսացիոն բնույթ հաղորդելուն	0
5.	Երեխաներին նվիրված կամ նրանց մասնակցությամբ նյութում գենդերային հավասարակշռության պահպանումը	1
6.	Երեխաներին նկարահանելիս, նրանց հետ խոսելիս ճիշտ ռակուրսի ընտրություն. երեխաները պետք է լրագրողի հետ նույն մակարդակի վրա գտնվեն (չնստել կամ չկանգնել երեխաներից բարձր, եթե անհրաժեշտ է՝ նույնիսկ գետնին նստել):	0

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հայաստանի հանրային հեռուսատեսության Առաջին ալիք (Հ1)

1-30 հունիսի, 2015թ.

	Ընդամենը (մվր)
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը	**11**
Երեխաների իրավունքների պահպանության չափորոշիչների խախտում պարունակող նյութերի քանակը	**0**

		Ընդամենը (մվր)
	I. Խոսքի և արտահայտման ազատության իրավունք, իր՝ երեխայի կյանքին վերաբերող որոշումների կայացման իրավունք	**0**
1.	Երեխայի կամ նրա համար պատասխանատու անձի (ծնող, խնամակալ, կրթական հաստատության/մանկատան ադմինիստրացիայի, խնամակալ և հոգաբարձուական մարմինների ներկայացուցիչ) համաձայնության պարտադիր լինելը երեխայի հետ հարցազրույց անցկացնելու, տեսանկարահանում կատարելու, նրանց վերաբերող լուսանկարների և փաստագրական նյութերի հանրայնացման համար, այդ թվում՝ այդ կարգի նյութերի՝ ապագայում օգտագործման համար (հաղորդումների լուսագրերում, արխիվային նյութեր ցուցադրելիս, հաղորդումների կրկնություններում և այլն)	0
2.	Սոցիալապես խոցելի խմբերի երեխաների, անչափահաս մեղադրյալների/ամբաստանյալների մասնակցությամբ նկարահանումների/եթերի ժամկետի վրա հղման առկայության պարտադիր լինելը՝ հաղորդման կրկնության/այլ հաղորդումներում արխիվային նյութերի ցուցադրության ժամանակ	0
3.	Երեխան և նրա համար պատասխանատու անձը պետք է հասկանան, որ հարցազրույց են տալիս/մասնակցում են նկարահանումների, որոնք եթեր են հեռարձակվելու (ինչի մասին նյութում հստակ նշում կա)	0
4.	Երեխան և լսարանը տեղեկացված են, որ երեխայի հետ հեռախոսային/համացանցով խոսակցությունը եթեր է գնալու (ինչի մասին նյութում հստակ նշում կա)	0
5.	Երեխայի համար հարմարավետ պայմանների առկայությունը հարցազրույցի ժամանակ/հաղորդմանը մասնակցելիս	0
6.	Երեխայի համար առանձնապես զգայուն, ցավոտ թեմաներով հաղորդումների/հարցազրույցների ժամանակ հնարավորինս ապահովել նրա համար մտերիմ մարդու ներկայությունը իր կողքին	0
7.	Երեխաների համար բացասական թեմատիկայով նյութերի առատությունը (սոցիալական ծանր վիճակ, հանցավորություն, բռնություն, դաժան վերաբերմունք, ռազմական կամ տարերային աղետների հետևանքներ)՝ ի վնաս դրական, երեխաների աշխարհն իր ողջ բազմազանությամբ ներկայացնող տեղեկությունների *(տվյալ չափորոշիչը վերաբերում է ոչ թե կոնկրետ հաղորդմանը/նյութին, այլ մոնիտորինգի ժամանակահատվածում ուսումնասիրված բոլոր հաղորդումներին/նյութերին)*	0
8.	Նյութերում գիտական այն փաստերի, պատմական իրողությունների մեկնաբանությունները, որոնք կարող են երեխաների կրթության, մտավոր զարգացման վրա բացասաբար ազդել	0
9.	Այնպիսի գաղափարների պրոպագանդան, որոնք սուր հակասության մեջ են համամարդկային արժեքների և համընդհանուր բարոյական նորմերի հետ և կարող են երեխաների դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունենալ	0

			Ընդամենը (մվր)
	II. Մասնավոր կյանքի, խորհրդապահության և անանունության իրավունք		**0**
1.	Երեխայի, նրա եղբայրների, քույրերի կամ հասակակիցների համար հնարավոր վտանգի առկայության պարագայում, ցանկացած տվյալների և նյութերի (լուսանկարներ, տեսագրություններ կամ այլ փաստական տեղեկություններ) հրապարակման արգելքը, որոնցով հնարավոր լինի երեխային նույնականացնել՝ ճանաչել		0
2.	Երեխայի, նրա եղբայրների, քույրերի կամ հասակակիցների համար հնարավոր վտանգի առկայության պարագայում, հրապարակման մեջ ոչ թե կոնկրետ այդ երեխայի/նրա հիմնախնդրի, այլ ընդհանուր առմամբ այդ կարգավիճակում գտնվող երեխաների հիշատակման սկզբունքի պահպանությունը		0
3.	Ցանկացած տվյալի և նյութի հրապարակման արգելքը, որով հնարավոր լինի երեխային նույնականացնել՝ ճանաչել,	- եթե նա սեռական բռնության կամ շահագործման զոհ է, կամ ինքն է ֆիզիկական կամ սեռական բռնություն կիրառել (օրինակ, արգելվում է օգտագործել «արյունապղծություն» բառը կամ այլ կերպ ցուցադրել երեխայի և բռնարարի կապը, որը թույլ կտա երեխային նույնականացնել որպես սեռական հետապնդման զոհի),	0
		- եթե ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր է, սպիդով հիվանդ է կամ այդ հիվանդությունից է մահացել (բացի այն դեպքերից, երբ երեխան, ծնողները և խնամակալը համաձայնում են, որ երեխայի անունը հրապարակվի, ինչի մասին նյութում հստակ նշում կա),	0
		- եթե կասկածվում, մեղադրվում կամ դատապարտվել է հանցագործություն կատարելու համար,	0
		- եթե երեխան ներկայում կամ նախկինում մասնակցել է ռազմական գործողությունների (երեխայի համար հնարավոր վտանգի առակայության դեպքում),	0
		- եթե երեխան ապաստան է խնդրում, փախստական է կամ վերաբնակիչ (երեխայի համար հնարավոր վտանգի առակայության դեպքում)	0
4.	Երեխայի նույնականացման արգելքի պահպանումը, եթե նրա ծողները հակասոցիալական կամ հանցավոր գործունեություն են ծավալել (հարբեցող, թմրամոլ ծնողներ և այլն)		0
5.	Երեխաների ծնողների կամ խնամակալների մասին կոնկրետ տվյալների հրապարակման արգելք (բացի նրանց հասարակական դիրքի և ունեցվածքի մասին ընդհանուր տվյալներից), եթե չկա դրա ծայրահեղ անհրաժեշտությունը		0
6.	Երեխաների հիվանդությունների/ապրելու ծանր պայմանների, հնարավոր հետևանքների մասին այնպիսի մանրամասների հրապարակման արգելք, որոնք ներկայում կամ ապագայում կարող են բարդացնել նրա կյանքը, հարաբերությունները շրջապատի հետ, նրան օտարված կամ ծաղրի առարկա դաձնել		0
7.	Հաղորդման տեսաձայնային միջավայրի արգելքի պահպանումը՝ խուսափելու համար երեխային նույնականացնելուց, եթե անհրաժեշտ է պահպանել երեխայի անանունությունը		0

		Ընդամենը (մվր)
	III. Երեխաների մասնակցությամբ հարցազրույցների/հաղորդումների վարման կանոններ	**0**
1.	Հարցազրույցի համար երեխաներին ընտրելիս բացառել սեռային, ռասայական, կրոնական, սոցիալական կարգավիճակով, կրթության մակարդակի և ֆիզիկական առանձնահատկություններով պայմանավորված խտրականությունը	0
2.	Խուսափել հարցազրույցի ընթացքում երեխային հոգեկան ցավ պատճառելուց, նրան ստիպելուց՝ կրկին վերապրելու իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները և իր կյանքի այլ ծանր պահերը	0

3.	Խուսափել երեխայի, նրա ընտանիքի անդամների և ընկերների ազգությանը, մշակույթին, կրոնին, բնակության վայրին վերաբերող՝ իրենց համար նվաստացուցիչ արտահայտությունների կամ մեկնաբանությունների, եզրույթների/պիտակների գործածումից (օրինակ, քո հայրը անհույս հարբեցող է, դու՝ հանցագործ)	0
4.	Խուսափել երեխային սադրելուց՝ վատ արտահայտվել իր հարազատների, ընկերների, բնակության վայրի և այլնի մասին	0
5.	Բացառել հարցազրույցի ժամանակ երեխայի վրա ճնշումը (չշտապեցնել նրան, չստիպել՝ խոսել ավելի արագ)	0
6.	Խուսափել հարցերին պատասխանել դժվարացող երեխայի չիմացությունը կամ անկրթությունը ընդգծելուց	0
7.	Ցուցադրել, որ երեխային որպես հավասարի եք վերաբերվում: Բացառել հովանավորչական պահվածքը, վերից նայելու վերաբերմունքը, սեփական խելքը և գիտելիքներն ընդգծելը, երեխայի անունից կամ նրա փոխարեն ելույթ ունենալը (իր բառերը նրա «բերանը դնելը»), երեխային ընդհատելը, երեխայի ասածները որպես զվարճանք, կատակ մատուցելը	0
8.	Խուսափել օգտագործելուց անհարկի և այնպիսի հարցեր, որոնք կարող են ցավ/վախ պատճառել, այնպիսի հարցեր, որոնց երեխաները չեն կարող պատասխանել, կամ կարճ աբստրակտ հարցեր (օրինակ, «այնպես չէ՞», «հասկանալի՞ է»), որոնք պահանջում են անբովանդակ, միավանկ պատասխաններ («այո», «ոչ»)	0
9.	Խուսափել երեխաների մեջ կեղծ հույսեր արթնացնելուց՝ հարցազրույցին/հաղորդմանը մասնակցելը խթանելու համար: Անթույլատրելիությունը՝ բեմադրություններ անելու, երեխաներին մանիպուլյացիաների ենթարկելու, նրանց խնդրելու՝ ասել կամ անել այն, ինչը երեխաների սեփական պատմության մաս չի կազմում, սակայն անհրաժեշտ է տպավորիչ պատկեր ստանալու կամ ազդեցիկ ռեպորտաժ պատրաստելու համար: Անընդունելիությունը՝ սենսացիոն լուսաբանման օգտին չարաշահելու երեխայի շահերը	0
10.	Անթույլատրելիությունը՝ շարունակելու թեման կամ հարցազրույցը, եթե երեխան հուզված է, անհարմարություն է զգում, դառնում է ցրված, նվաղկոտ կամ գերզգայուն և այլն	0
11.	Խուսափել՝ օգտագործելուց երեխայից ստացված չստուգված տեղեկությունը, որպեսզի բացառվեն նրա կողմից չափազանցելը, ասեկոսեները որպես փաստ ներկայացնելը՝ լրագրողին դուր գալու կամ շողոքորթելու համար	0

		Ընդամենը (մվր)
	IV. Երեխաների թեմատիկայի լուսաբանման կարծրատիպեր	**0**
1.	Զոհ-երեխա	0
2.	Հանցագործ երեխաները որպես վտանգ հասարակության համար	0
3.	Հրեշտակ-երեխաներ (որոնք ուղղակի չեն կարող վատ բան անել)	0
4.	Համակրելի երեխաներ/համով մոռթիկներ, մեծահասակների համակրելի հավելվածները (համակրելի երեխաների աննպատակ ներկայացում, օգտագործում՝ նյութին հմայք ավելացնելու համար)	0
5.	Հրաշք/բացառիկ երեխաներ («արտասովոր խելացի/գեղեցիկ/ճարպիկ և այլն՝ նյութն ավելի հետաքրքիր դարձնելու համար)	0
6.	Աքսեսուար երեխաներ (ծնողների սեփականությունը)/նյութում ծնողների իրավունքները գերակշռում են նրանց երեխաների իրավունքներին	0
7.	«Էս դարի/թվի/հիմիկվա երեխաները….Իսկ մեր ժամանակ» (մեծահասակների անցյալի կարոտախտ)	0
8.	Մեծահասակների զվարճալիք երեխաներ (երեխաների լուրջ մեկնաբանությունների օգտագործում՝ մեծահասակներին ծիծաղեցնելու նպատակով)	0
9.	Բոլոր տղաներն ուժեղ են, բոլոր աղջիկները՝ թույլ (գենդերային կարծրատիպ)	0

		Ընդամենը (մվր)
	V. Նյութի մատուցման ձևը	**0**
1.	Նյութում երեխայի նկատմամբ հովանավորչական, մեծամիտ-զիջողական և այդ կարգի տոնայնության բացառում	0
2.	Խուսափել նյութում այնպիսի լուսանկարների, տեսաշարերի և գրաֆիկական այլ միջոցների չափից ավելի օգտագործումից, որտեղ երեխաները ներկայացված են նվաստացուցիչ պայմաններում և միայն խղճահարություն առաջացնող իրավիճակներում, որոնցում անտեսված է երեխաների՝ սեփական արժանապատվության զգացումը, և բացակայում է հարգանքը նրանց նկատմամբ	0
3.	Նյութում այնպիսի տեսաձայնային միջավայրի առկայության անթույլատրելիությունը, որը երեխայի ընտանիքը, համայնքը, հարազատ վայրերը ցույց տալիս նրան տառապանք է պատճառում	0
4.	Նյութում այնպիսի տեսաձայնային միջավայրի օգտագործումը, որը համապատասխանում է երեխայի, նրա կյանքի և դեպքի մասին պատմությանը և չի ծառայում նյութի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, դրան սենսացիոն բնույթ հաղորդելուն	0
5.	Երեխաներին նվիրված կամ նրանց մասնակցությամբ նյութում գենդերային հավասարակշռության պահպանումը	0
6.	Երեխաներին նկարահանելիս, նրանց հետ խոսելիս ճիշտ ռակուրսի ընտրություն. երեխաները պետք է լրագրողի հետ նույն մակարդակի վրա գտնվեն (չնստել կամ չկանգնել երեխաներից բարձր, եթե անհրաժեշտ է՝ նույնիսկ գետնին նստել):	0

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

«Արմենիա» հեռուստաալիք

1-30 հունիսի, 2015թ.

	Ընդամենը (մվր)
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը	**43**
Երեխաների իրավունքների պահպանության չափորոշիչների խախտում պարունակող նյութերի քանակը	**6**

		Ընդամենը (մվր)
	I. Խոսքի և արտահայտման ազատության իրավունք, իր՝ երեխայի կյանքին վերաբերող որոշումների կայացման իրավունք	**2**
1.	Երեխայի կամ նրա համար պատասխանատու անձի (ծնող, խնամակալ, կրթական հաստատության/մանկատան ադմինիստրացիայի, խնամակալ և հոգաբարձուական մարմինների ներկայացուցիչ) համաձայնության պարտադիր լինելը երեխայի հետ հարցազրույց անցկացնելու, տեսանկարահանում կատարելու, նրանց վերաբերող լուսանկարների և փաստագրական նյութերի հանրայնացման համար, այդ թվում՝ այդ կարգի նյութերի՝ ապագայում օգտագործման համար (հաղորդումների լուսագրերում, արխիվային նյութեր ցուցադրելիս, հաղորդումների կրկնություններում և այլն)	0
2.	Սոցիալապես խոցելի խմբերի երեխաների, անչափահաս մեղադրյալների/ամբաստանյալների մասնակցությամբ նկարահանումների/եթերի ժամկետի վրա հղման առկայության պարտադիր լինելը՝ հաղորդման կրկնության/այլ հաղորդումներում արխիվային նյութերի ցուցադրության ժամանակ	0
3.	Երեխան և նրա համար պատասխանատու անձը պետք է հասկանան, որ հարցազրույց են տալիս/մասնակցում են նկարահանումների, որոնք եթեր են հեռարձակվելու (ինչի մասին նյութում հստակ նշում կա)	1
4.	Երեխան և լսարանը տեղեկացված են, որ երեխայի հետ հեռախոսային/համացանցով խոսակցությունը եթեր է գնալու (ինչի մասին նյութում հստակ նշում կա)	1
5.	Երեխայի համար հարմարավետ պայմանների առկայությունը հարցազրույցի ժամանակ/հաղորդմանը մասնակցելիս	0
6.	Երեխայի համար առանձնապես զգայուն, ցավոտ թեմաներով հաղորդումների/հարցազրույցների ժամանակ հնարավորինս ապահովել նրա համար մտերիմ մարդու ներկայությունը իր կողքին	0
7.	Երեխաների համար բացասական թեմատիկայով նյութերի առատությունը (սոցիալական ծանր վիճակ, հանցավորություն, բռնություն, դաժան վերաբերմունք, ռազմական կամ տարերային աղետների հետևանքներ)՝ ի վնաս դրական, երեխաների աշխարհն իր ողջ բազմազանությամբ ներկայացնող տեղեկությունների *(տվյալ չափորոշիչը վերաբերում է ոչ թե կոնկրետ հաղորդմանը/նյութին, այլ մոնիտորինգի ժամանակահատվածում ուսումնասիրված բոլոր հաղորդումներին/նյութերին)*	0
8.	Նյութերում գիտական այն փաստերի, պատմական իրողությունների մեկնաբանությունները, որոնք կարող են երեխաների կրթության, մտավոր զարգացման վրա բացասաբար ազդել	0
9.	Այնպիսի գաղափարների պրոպագանդան, որոնք սուր հակասության մեջ են համամարդկային արժեքների և համընդհանուր բարոյական նորմերի հետ և կարող են երեխաների դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունենալ	0

			Ընդամենը (մվր)
	II. Մասնավոր կյանքի, խորհրդապահության և անանունության իրավունք		**1**
1.	Երեխայի, նրա եղբայրների, քույրերի կամ հասակակիցների համար հնարավոր վտանգի առկայության պարագայում, ցանկացած տվյալների և նյութերի (լուսանկարներ, տեսագրություններ կամ այլ փաստական տեղեկություններ) հրապարակման արգելքը, որոնցով հնարավոր լինի երեխային նույնականացնել՝ ճանաչել		0
2.	Երեխայի, նրա եղբայրների, քույրերի կամ հասակակիցների համար հնարավոր վտանգի առկայության պարագայում, հրապարակման մեջ ոչ թե կոնկրետ այդ երեխայի/նրա հիմնախնդրի, այլ ընդհանուր առմամբ այդ կարգավիճակում գտնվող երեխաների հիշատակման սկզբունքի պահպանությունը		0
3.	Ցանկացած տվյալի և նյութի հրապարակման արգելքը, որով հնարավոր լինի երեխային նույնականացնել՝ ճանաչել,	- եթե նա սեռական բռնության կամ շահագործման զոհ է, կամ ինքն է ֆիզիկական կամ սեռական բռնություն կիրառել (օրինակ, արգելվում է օգտագործել «արյունապղծություն» բառը կամ այլ կերպ ցուցադրել երեխայի և բռնարարի կապը, որը թույլ կտա երեխային նույնականացնել որպես սեռական հետապնդման զոհի),	0
		- եթե ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիր է, սպիդով հիվանդ է կամ այդ հիվանդությունից է մահացել (բացի այն դեպքերից, երբ երեխան, ծնողները և խնամակալը համաձայնում են, որ երեխայի անունը հրապարակվի, ինչի մասին նյութում հստակ նշում կա),	1
		- եթե կասկածվում, մեղադրվում կամ դատապարտվել է հանցագործություն կատարելու համար,	0
		- եթե երեխան ներկայում կամ նախկինում մասնակցել է ռազմական գործողությունների (երեխայի համար հնարավոր վտանգի առակայության դեպքում),	0
		- եթե երեխան ապաստան է խնդրում, փախստական է կամ վերաբնակիչ (երեխայի համար հնարավոր վտանգի առակայության դեպքում)	0
4.	Երեխայի նույնականացման արգելքի պահպանումը, եթե նրա ծողները հակասոցիալական կամ հանցավոր գործունեություն են ծավալել (հարբեցող, թմրամոլ ծնողներ և այլն)		0
5.	Երեխաների ծնողների կամ խնամակալների մասին կոնկրետ տվյալների հրապարակման արգելք (բացի նրանց հասարակական դիրքի և ունեցվածքի մասին ընդհանուր տվյալներից), եթե չկա դրա ծայրահեղ անհրաժեշտությունը		0
6.	Երեխաների հիվանդությունների/ապրելու ծանր պայմանների, հնարավոր հետևանքների մասին այնպիսի մանրամասների հրապարակման արգելք, որոնք ներկայում կամ ապագայում կարող են բարդացնել նրա կյանքը, հարաբերությունները շրջապատի հետ, նրան օտարված կամ ծաղրի առարկա դաձնել		0
7.	Հաղորդման տեսաձայնային միջավայրի արգելքի պահպանումը՝ խուսափելու համար երեխային նույնականացնելուց, եթե անհրաժեշտ է պահպանել երեխայի անանունությունը		0

		Ընդամենը (մվր)
	III. Երեխաների մասնակցությամբ հարցազրույցների/հաղորդումների վարման կանոններ	**13**
1.	Հարցազրույցի համար երեխաներին ընտրելիս բացառել սեռային, ռասայական, կրոնական, սոցիալական կարգավիճակով, կրթության մակարդակի և ֆիզիկական առանձնահատկություններով պայմանավորված խտրականությունը	0
2.	Խուսափել հարցազրույցի ընթացքում երեխային հոգեկան ցավ պատճառելուց, նրան ստիպելուց՝ կրկին վերապրելու իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները և իր կյանքի այլ ծանր պահերը	4

3.	Խուսափել երեխայի, նրա ընտանիքի անդամների և ընկերների ազգությանը, մշակույթին, կրոնին, բնակության վայրին վերաբերող՝ իրենց համար նվաստացուցիչ արտահայտությունների կամ մեկնաբանությունների, եզրույթների/պիտակների գործածումից (օրինակ, քո հայրը անհույս հարբեցող է, դու՝ հանցագործ)	0
4.	Խուսափել երեխային սադրելուց՝ վատ արտահայտվել իր հարազատների, ընկերների, բնակության վայրի և այլնի մասին	0
5.	Բացառել հարցազրույցի ժամանակ երեխայի վրա ճնշումը (չշտապեցնել նրան, չստիպել՝ խոսել ավելի արագ)	0
6.	Խուսափել հարցերին պատասխանել դժվարացող երեխայի չիմացությունը կամ անկրթությունը ընդգծելուց	0
7.	Ցուցադրել, որ երեխային որպես հավասարի եք վերաբերվում: Բացառել հովանավորչական պահվածքը, վերից նայելու վերաբերմունքը, սեփական խելքը և գիտելիքներն ընդգծելը, երեխայի անունից կամ նրա փոխարեն ելույթ ունենալը (իր բառերը նրա «բերանը դնելը»), երեխային ընդհատելը, երեխայի ասածները որպես զվարճանք, կատակ մատուցելը	0
8.	Խուսափել օգտագործելուց անհարկի և այնպիսի հարցեր, որոնք կարող են ցավ/վախ պատճառել, այնպիսի հարցեր, որոնց երեխաները չեն կարող պատասխանել, կամ կարճ աբստրակտ հարցեր (օրինակ, «այնպես չէ՞», «հասկանալի՞ է»), որոնք պահանջում են անբովանդակ, միավանկ պատասխաններ («այո», «ոչ»)	2
